

Գրիշա Սմբատյան. «Բախում են դռներն ու դարպասները»

Ներկայացնում եմ ձեզ հատվածներ շուրջ 300 համակարգչային էջ պարունակող **«Բախում են դռներն ու դարպասները»** գրքից: Կընտրվի ու կավելացվի 300 լուսանկար, ինչպես և կապանցի ու Կապանից աքսորվածների ցուցակը (ըստ **Armenia Total(itar)is** կայքի՝ **փոքրիկ լրացումներով**):

Գիրքն ունի նախաբան, կընդգրկի գերությունից հետո քշված, Կապանից և Գորիսից տեղահանված, իրադարձությունների ակնատես մարդկանց 37 հուշագրություն, աքսորավայրը պատկերող, սիրո, կարոտի 60 բանաստեղծություն, 10 նամակ և այլն: Ավարտվում է Հիշատակարանով: Արվել է ավելի քան 250 հղում և ծանոթագրություն, սակայն դրանց կարիքը դեռ կա մի շարք էջերում, այդ թվում՝ ներկայացվող հատվածներում: Շարունակում եմ փնտրել, աշխատել, կավարտեմ օգոստոսի 25-ին: Կհրատարակվի Հրանուշ Խառատյանի խմբագրելուց հետո:

Որոշ հարցերի պատասխաններ կան նախաբանից ընտրված հատվածում:

Շատ սովորական պատասխանում եմ «Նյութից մակաբերվող դասը՝ այսօրվա կյանքի համար» առաջադրանքին.

Պատմությունը սովորեցնում է, որ պետականություն չունեցող ժողովուրդների կյանքում անխուսափելի են աքսորը, տեղահանությունները, այլ աղետներ: Այն ահազանգում է հատկապես մեր օրերում աչքի լույսի պես պահպանել պետականությունը, հենց այս պահին (համավարակ և այլն) սատարել պետությանը, չտարվել մանրախնդիր կուսակցական, անձնական, խմբային, օտարի՝ մտազարության հասնող շահերով, այլապես պատմությունը կրկնվելու հակում ունի. կգան հյուսիսից, երկաթուղին վերականգնելու համար միջոցներ չեն խնայի, մի օր էլ կրկին մեզ կնետեն վագոնները, և այս անգամ կարող ենք հայտնվել Ալթայից այն կողմ:

Ստորև՝ բովանդակությունը

ՆԱԽԱԲԱՆ. ԳԻՐՔԸ, ՈՐ ՊԻՏԻ ՄԻ ՕՐ ԼՈՒՅՍ ԱՇԽԱՐՀ ԳԱ

ԳԼՈՒԽ 1

ՄԵԾ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՐԱԳՈՒՇԱԿ ՕՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ

ՆԱԽՕՐԵԻՆ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՊԱՏԱՆԴՆԵՐԸ

ՀՈՒՆԻՄԻ 14-Ի ԼՈՒՍԱԲԱՅԸ: ЛУЧШЕ ИХ СОСЛАТЬ {ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՆՐԱՆՑ ԱՔՍՈՐԵԼ}: Ա՛խ, ՄԻԱՅՆ ԹԵ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆ ԻՄԱՆԱՐ

ԿՌՈՒՆԿ, ՈՒՍՏԻ՞ ԿՈՒԳԱՍ: Ա՛խ, ՎԱԳՈ՛Ն, ՎԱԳՈ՛Ն

ДЕДУШКА, “ЗДЕСЬ СИБИР?” {ՊԱՊԻ՛Կ, ԱՅՍԵՂ ՍԻԲԻ՞ՐԸ Է}

ՍՐԻԿԱ՛... ԻՆՉՈ՞Ւ ԻՆՔՆԱՍՊԱՆ ՉԵՍ ԵՂԵԼ

ԳԼՈՒԽ 2

ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԵՆ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԸ... ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ

ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Կոլիմա՝ երկիր մարդակեր
ՈՍԿԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ. Նեմեցի ու սովետի փշալարերի մեջ
ՇՄԱՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ. Մեղքս գերի ընկնելն էր
ՈՍԿԵԶԵՌԻԿ ՏՂԱՆ՝ ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏՈՀՄԻՑ
ՍԻՐԱՆՈՒՅՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. Փնտրված զենքը գրիչ էր
ՄԱԿԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ. Կազեբեն ինձ չտարավ
ԳԵՎՈՐԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ. Հյուսիսի սառույցներում
ԱՇՈՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ. Ինձ անմեղ տեղը տարան
ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. Կիսատ պատմություն, կամ երբ գնդակահարվում է
բարոյականությունը
ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ. Այն օրերին
ՎԱՐՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ. Շատ բան տեղական նախաձեռնություն էր
ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. Չաքսորեցին, բայց կոլխոզն ու Կազեբեն հոգիս կերան

ԳԼՈՒԽ 3

ԱԼԹԱՅ. ՀԵՏԱՊՆԴՈՂ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

ԳԱՌՆԻԿ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ. Հունիսի 14-ի լուսաբացը
ՎՐԱԺԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. Մի շարադրության հետքերով
ՎՈԼՈՂՅԱ ԱԴԱՄՅԱՆ. Քրատակից՝ Ալթայ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ. Ճամփորդ եմ
ՄԵԼՍԻԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ. Ալթայն աչքերիս առաջ
ԵԼԵՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ. Երազս ու կորցրած սերս
ՇԻԿԱՀՈՂ. ՇԱՂՈՏ ԼՈՒՍԱԲԱՅԻ ԿԱՐՄԻՐ ՊԱԳՈՆՆԵՐԸ
ԱՇՈՏ ՔՈՉԱՐՅԱՆ. Երբ վերադարձանք, մեր տունն այլևս չկար
ՓԱՓԱԳ ԵՓՐԵՍՅԱՆ. Հայրենիքը կանչում էր

ԺՈՐԱ ԱՎԱԳՅԱՆ. Ինչու՞ ասացի

ՋՈՒԼԻԵՏԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Վրիժառության զոհեր կամ Կռու՛նկ, ուստի՞ կուգաս

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ. Կապանցիների հետ

ԳԵԴԵՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. Պատերազմ պատերազմից հետո

ԱՐՏԱՇԵՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ. Կագեբեն հարցերը լուծում էր ոչ թե տրամաբանությամբ, այլ ենթադրությամբ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Հարյուր յոթ թանաքաման

ԿԱՄՈ ՓԱՐՍՅԱՆ. Մեր մայրը՝ մահացած կոլխոզի համար, մեր հայրը՝ աքսորական՝
ռազմագերի լինելու համար

ՍՈՆՅԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ. Մեզ խնդրում էին, որ մնանք Սիբիրում

ԱՔՍՈՐԻՑ ՀԵՏՈ... ԼԻՆՈՒՄ ԷՐ ԵՎ ԱՅՍՊԵՍ

ԳԼՈՒԽ 4

ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԱՄԱԿԱՆԻ, ՉԱՓԱԾՈ ԳՈՐԾԵՐ

ՑՈՒՑԱԿ՝ ըստ Armenia Total(itar)is կայքի (փոքրիկ լրացումներով)

ՍՈՒՅՆ ԳՐՔԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(Հատված նախաբանից)

«Ինձնից չսպասեք այն ժամանակվա ներքին կյանքի երկար պատմություններ... սոսկալի իրադարձությունները, ամեն տեսակ վիշտը, այնուամենայնիվ ավելի հեշտ են հանձնվում թղթին, քան միանգամայն պայծառ ու լուսավոր հիշողությունները... կարծես թե կարելի՞ է պատմել երջանկությունը» (Ալ. Գերցեն, «Եղելություններ և խոհեր», թարգմ. Հարություն Թուրշյանի, Երևան 1952, էջ 308)

«Սոսկալի իրադարձություններն ու ամեն տեսակ վիշտը» ցավալիորեն պատմության մեջ և առօրյա կյանքում մեր ժողովրդի կյանքի ուղեկիցներն են եղել անգամ այն ժամանակ (Երկրորդ աշխարհամարտում ԽՍՀՄ հաղթանակից հետո), երբ թվում էր թե երկրի բարձրագույն ղեկավարությունն ու ղեկավարող կուսակցությունը պիտի ծնկի գային նրա առաջ՝ անսահման նվիրվածության, զոհերի ու անցյալում նույն այդ կուսակցության գործած մեղքերի համար: Երախտամոռ և ուրացող կառավարողները հակառակն արեցին:

Դա բռնաքստրն էր, 49-ի հունիսի 14-ի Մեծ աքսորը:

...Պատերազմի վերքերը չսպիացած, հաղթանակը չգիտակցած, հաղթանակի բերկրանքը չվայելած՝ դեռ ողբում էինք մեր հայրերի, մեր եղբայրների կորուստը, դեռ քարշ էինք գալիս կոլխոզային դաշտերում, սարերի խոտհարքներում, հունձ էինք անում ցորենի արտերում,

շնչում հանքերի թոքախտավոր օդը, հոգնաբեկ, կեսքուն, կեսարթուն էինք, երբ բախեցին մեր տների դարպասներն ու դռները ու մեզ խցկեցին «Ստուդեբեկեր» ավտոների թափքերն ու ապրանքատար վագոնները... Արթնացանք Ալթայի երկրամասում ու միայն այդ ժամանակ հասկացանք, թե որքան երախտամոռ, որքան ապերախտ, անշնորհակալ են սովետական պետությունը, բոլշևիկները, ու որքան մարդատյաց՝ «Ժողովուրդների հայրը»:

Հետֆիլտրացիոն տաժանավայրեր քշվածներ, 49-ի աքսորականներ... Նրանք ինձ «շատ երկար սպասեցին» Ալթայի երկրամասում¹: Նրանք ապրեցին վախվորած, հեռացան ու հեռանում են չհասկացված ու վիրավորված... Հետպատերազմյան աքսորական սերունդը քչախոս էր, հոգնած ու տխուր: Ժամանակը, հետխորհրդային ժամանակն իրենց «անակնկալներով» փոխել են շատ բան տեսած այս մարդկանց մտածողությունը...: Մտածելու, խորհելու բան. ոմանք կարոտով ու սիրով են հիշում աքսորական անցյալն ու աքսորավայրը: Գուցե պատանեկության ու երիտասարդության տարիների կարոտն էր կամ նրանց ապրած վերջին տարիներից հիասթափությունը...

Այլապես ինչո՞ւ Առաջին աշխարհամարտի զինվոր, Գեորգիյան խաչի ասպետ, Զանգեզուրի գոյապայքարի վաշտապետ, 37-ին գնդակահարված Սիմոն Մելքումյանի դուստր Էմման թախծոտ ժպիտով պիտի ասեր. **«Մեզ Միբիր աքսորողներին թաղեն, բայց աքսորից հետ բերողներին խորը թաղեն»:**

49-ի սերունդը՝ հասուն տարիքի, երիտասարդ, պատանի ու աղջիկ, սիրում էին իրենց Հայրենիքը, մեր Հայրենիքը, հայրենի եզերքը: Այդ սերն ուժգնացավ, երբ բռնությամբ նետվեցին բեռնատարների թափքեր ու ապրանքատար վագոններ, երբ սուլեց շոգեքարշը, երբ սլանում էին դեպի անհայտություն: Այնտեղ՝ Միբիրյան անսահմանության մեջ, թանկ ու սիրելի մնացին հայոց հողը, նրա մարդիկ: Աշխատում էին, ցավից ու կարոտից երգեր հյուսում, բանաստեղծություններ հորինում, նամակներ գրում, օրագրություններ անում: Նրանք երագում էին վերադառնալ Հայրենիք, նրանք մեռնում էին կարոտից:

Մի քանիսն Ալթայում երգեր են ձուներ «Հայր Մտալին»-ին: Ներելի է...

Կորուսյալ սերունդ՝ աքսորյալներ, տեղահանվածներ, վտարանդիներ... Նրանց դատապարտած երկիրը փլուզվեց, բայց ո՛չ նրանց դեմ գործած հանցանքը՝ դատապարտվեց, ո՛չ էլ գնահատվեցին կամ կարեկցանքի արժանացան: Այդպես էլ՝ վիրավոր ու մոլորված, մանավանդ մոլորված, հեռացան ու հեռանում են այս երկրային կյանքից՝ իրենց հետ տանելով մեր պատմության փակ էջերը: Նպատակս չէ խորանալ Մեծ աքսորի դրդապատճառների, աքսորի համատարած բնույթի, ընդունված որոշումների, գնահատականների և այլ իրադարձությունների մեջ, այլ, որքան կարող եմ, փորձել եմ փրկել էջեր... Մեր հիշողության մի փոքրիկ հատվածի՝ 1949-ի հունիսի 14-ի աքսորի կապանյան դրվագներն են այստեղ, որոշ դեպքերում՝ Գորիսի մեկ-երկու գյուղի: Եվ տաժանավայրերը՝ **Ալթայից մինչև «Կուլիմա՝ երկիր մարդակեր»:**

Հրանուշ Խառատյանի բնութագրմամբ՝ Պատմությունը՝ ներքնից:

¹ Գ. Մմբատյան, Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, Զանգակ, 2009, Վերջաբանից:

Գրքում մի ամբողջ սերնդի կյանքի պատմություն է: Այստեղ մարդկանց հետ անցկացրած իմ զրույցներն են, զրառումները: Մեփական նախաձեռնությամբ ու իմ հորդորով գրված հուշեր ևս կան, որոնք շտկումների, լրացումների, խմբագրման կարիք են ունեցել:

Հաճախ դիտողությունների եմ արժանանում. «Նեգատիվը շատ է, լավը՝ քիչ: Որոշ վատ բաներ պիտի մոռացության մատնել, չպիտի գրել դրանց մասին: Դե, ինչ որ եղել, եղել է»: Ինչ որ եղել, եղել է, բայց... համակերպվենք. «Պատմությունը ոչ թե սրբագրման թուղթ է, այլ գիյոտին» (Ալ. Գերցեն):

ՆԱԽՕՐԵՒՆ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՊԱՏԱՆԴՆԵՐԸ

(Հատված)

Հունիսի 14-ի աքսորին առնչվող բազմազան նյութերը՝ զրույցներ, լուսանկարներ (երկաթուղային կայարանը չկա. ո՞վ սիրտ կաներ այդ պահին լուսանկարել, թեև լուսանկարչական ապարատների պակաս չկար, քանի որ դրանք իրենց հետ բերել էին զորացրվածները), օրագրեր, բանաստեղծություններ, բանավոր ու գրավոր հուշեր, զրառումներ, ձայնագրություններ, հնարավորություն են տալիս քիչ թե շատ վերականգնել այդ օրերի սահմոկեցուցիչ պատկերը, այդ թվում՝ աքսորի նախօրեն բազմաթիվ ու բազմապիսի փորձությունների միջով անցած Ղափան- Կապանում:

Հունիսի 13-ի աշխատանքային օրը ՀԿ(բ)կ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Աշոտ Սարգսյանը սկսեց՝ շտապ կարգով իր մոտ հրավիրելով կուսկազմ բաժնի վարիչ Աշոտ Հովհաննիսյանին և կարգադրեց. «Աշո՛տ Արշակիչ (նրան այդպես էին դիմում), շտա՛պ գնեք 107 թանաքաման, մի եղբան էլ գրիչ, գրելու թուղթ ու թանաք: Չինայե՛ս: Իսկ մինչ այդ ծանոթացի՛ր այս թղթերի հետ»:

Քարտուղարը Հովհաննիսյանին հանձնեց Ղափանի շրջանի կուսակցական, պետական



աշխատողների և հիմնարկ-ձեռնարկությունների տնօրենների ցուցակը և պահանջեց, որպեսզի կազմաժինը ապահովի նրանց ներկայությունը բանվորական ակումբում կեսօրից անմիջապես հետո անցկացվելիք

ՀԿ(բ)կ Ղափանի շրջկոմի բյուրոյի կազմը և աշխատակիցներ(ցիլինդրով՝ Աշոտ Սարգսյանը) 1949թ.

խորհրդակցությանը: Ոչ ոք Ղափանի շրջկոմում, առաջին քարտուղարից բացի, չգիտեր, թե ինչի համար են գնվում այդքան գրենական պիտույքներ: Իմացան հետո, երբ խորհրդակցությունից հետո «կցվածների» ձեռքն էին խոթում այդ պիտույքները աքսորականների տներում անհրաժեշտ արձանագրություններ կազմելու համար:

Ղափան, 1949 թվական, հունիսի 13. սովորական ամառային օր, սովորական առօրյայով ապրող բնակավայր՝ ոչ այն է փոքր քաղաք, ոչ այն է մեծ գյուղ: Հանքերում, ձեռնարկություններում և գյուղերում աշխատանքային եռուզեռ էր: Կեսօրից հետո բանվորական ակումբը լցվեց մարդկանցով: Սպասում էին խորհրդակցության սկսվելուն, բայց որևէ դեկավար չէր երևում: Սպասում էին, անհամբեր ելումուտ անում: Եվ այդպես մինչև երեկո:

Ժամը 18-ն անց 30-ին հայտարարեցին, որ տեղի ունենալիք հույժ կարևոր խորհրդակցության պատճառով ոչ ոք իրավունք չունի դուրս գալ դահլիճից և փակեցին դռները: Քաղաքում անմիջապես լուր տարածվեց, որ շրջկոմ կանչված 124 կուսակցական պետական աշխատող և հիմնարկ- ձեռնարկությունների տնօրեններ արգելափակվել են թատրոնի (բանվորական ակումբ) շենքում: Ներս ու դուրս անելու իրավունքից զրկվածները դահլիճում անհամբեր սպասում էին իրենց կուսակցական ընկերներից մեկուսացած ու համրացած Երևանի ներկայացուցիչ Սուրեն Միքայելյանի² և Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Աշոտ Մարգարյանի³ ելույթներին: Ժամանակը գլորվում էր, իսկ դահլիճում գտնվող այս երկուսը չէին խոսում: Նրանք համրացել էին:

²Սուրեն Միքայելյան, կուսակցական պետական աշխատող, Արթիկից, ավարտել է Աբովյանի անվ. մանկ. ինստիտուտի պատմության ֆակուլտետը, 1933-1937թթ. եղել է Արթիկի և Իջևանի շրջկոմների քարտուղար, 1937-ից՝ ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար, այնուհետև աշխատել է ՀԿ(բ) Կ Կենտկոմում, 1940-1948թթ.՝ Կենտկոմի քարտուղար, 1948-1955թթ.՝ լուսավորության նախարար, այնուհետև՝ Պրոֆտեխկոմության պետական կոմիտեի նախագահ (ըստ Վիքիպեդիայի)

³ Աշոտ Մարտիրոսի Մարգարյանը 2-րդ աշխարհամարտի մասնակից է, զրահատանկային զորքերի փոխգնդապետ: Ծնվել է 1915 թ. Ադրբեջանի Իսմայիլի շրջանի Կալազա գյուղում: Թուրքական արշավանքներից փրկվելու համար մայրը երեխային հասցրել է Աշխաբադ: Այստեղ էլ մոր մահից հետո երեխաներն ընկնում են որբանոց, ապա վերադառնում հայրենի գյուղ: Յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո քրոջ հետ տեղափոխվում է Երևան: 1936-ին ավարտում է Երևանի լեռնային տեխնիկումը, աշխատանքի անցնում Ալավերդու հանքերում: 1936-1938-ին ծառայել է խորհրդային բանակում: Ծառայությունից հետո սովորում է մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Պատերազմի առաջին օրերին հեռագրում է Վորոշիլովին՝ խնդրելով իրեն ռազմաճակատ ուղարկել: 1941-ի նոյեմբերին երդում է տալիս Լենինի հրապարակում: Նշանակվում է 89-րդ դիվիզիայի 526-րդ գնդի կոմիսար, ապա դիվիզիայի քաղաքային պետի տեղակալ: Մոսկվայում դասընթացներ անցկացնելուց հետո հայտնվում է Ուկրաինական ռազմաճակատում:

1981-ին (մահից մեկ տարի հետո) Կիևում լույս տեսավ բրիգադի հրամանատարի՝ գեներալ մայոր, Խորհրդային Միության հերոս Նիկոլայ Իվանիչ Ջավայրովի «Արիության վերստեր»՝ գիրքը 5-րդ առանձնացված, մեխանիզացված բրիգադի մասին, որն առաջինն էր անցել ԽՍՀՄ սահմանը, ազատագրել Իզմայիլը: Այստեղ խոսվում էր նաև Մարգարյանի մասին: Երկրորդ գրքում ևս հիշատակվում է Աշոտ Մարգարյանը:

Պատերազմից հետո վերադառնում է Երևան: Այնուհետև անցնում է կուսակցական աշխատանքի: 1948թ. նոյեմբերից մինչև 1950թ. նոյեմբերը Ղափանի կուսշրջկոմի առաջին քարտուղարն էր:

1950-56թթ. աշխատում է Հայաստանի երկրաբանական վարչության պետի տեղակալ: 1960-ից ղեկավարի աշխատանք էր կատարում գյուղատնտեսությունը սպասարկող հաստատություններում: Քարտուղար Աշոտ Մարգարյանն իրականում անգոր էր իրավապահ մարմինների դեմ: Ի՞նչ էր մնացել նրանից աքսորից հետո, ի՞նչ կերպ էր ուզում «քավել» մեղքերը իր ղեկավարած շրջանի բնակչության հանդեպ: Նրա կերպարը կարող է լրացնել Շիկահող գյուղի այն տարիների կոլտնտեսության նախագահ Գեղեոն Խաչատրյանի մի զրույցը: «Ռայկոմի քարտուղարին Ղափանում աքսորից հետո տանել չէին կարող: Նրան «Յիլինդր» էին անվանում՝ ցիլինդր կրելու համար: Որ ճիշտն ասենք, ինքը վախենում էր կազմեցից ու դատախազից: Բայց ո՞վ չէր վախենում դրանցից: Ինքը լավ ֆուտբոլիստ էր, սիրում էր սպորտը: Մի լավ բան արեց՝ Ղափանի ադրբեջանցիները, պատեֆոնները զլած, մուղամ էին լսում, էն չափի, որ թվում էր, թե Ղափանը հայկական քաղաք չէ: Նա կտրել տվեց կլկոցը, իսկ բողոքավորներին ասել էր՝ լսե՛ք ձեր տներում, չե՞ք ուզում, գնացե՛ք Զանգիլանում բարձր լսե՛ք: Ասում էին՝ Ավետիքովը, որքան էլ մոտ էր քարտուղարին, դրա համար (թուրքերն էին բողոքել) ուզում էր գործ սարքել գլխին՝ մեղադրելով նացիոնալիզմի մեջ: Աքսորից հետո՝ մի օր, երբ Մարգարյանը, կարծես գեղոզ ռազմեղկայում [երկրաբանահետախուզականում] էր, թե ինչ էր, Ստալինի մեռնելուց հետո էր, մի օր գյուղից ներքև՝ «Գետի արտում», հանդիպեցի: Հալից ընկած մի «Վիլիս»-ով էր, նախկին քարտուղարից բան չէր մնացել: Մոտեցա, բարևեցի, գիտեի, որ սոված

«Անտրամադիր էր հատկապես Սուրեն Միքայելյանը», - ասում են խորհրդակցության մասնակիցները:

Մարդիկ դես ու դեն էին ընկնում, նստում, վեր կենում, հենվում, փոփոխում աթոռներին, խոսում էին զգույշ, շշուկով: Դահլիճը կորել էր ծխի մեջ, ծխում էին բոլորը, նույնիսկ նրանք, ովքեր մինչ այդ մի հատիկ ծխախոտ անգամ բերանները չէին տարել: Ներկաներն ամեն տեսակի ենթադրություն էին անում՝ բացի մեկից. այն, որ ժամեր անց մասնակիցը կլինեն հայրենակիցների ու հարազատների դեմ Կրեմլում նյութված ստոր դավադրության իրականացմանը:

Մարդիկ հարցեր էին ուղղում միմյանց ու կասկածներ հայտնում: Հիմնական կասկածները ծավալվում էին Թուրքիայի դեմ պատերազմի շուրջ: Իրեն անհանգստացնողներին, թե ինչ հարցեր են քննարկվելու այսքան ձգձգվող խորհրդակցությունում, Հովհաննիսյանը արձագանքում էր. «Հետո ի՞նչ, որ կազմբաժնի վարիչն եմ, օրակարգին անտեղյակ եմ»:

- Աշո՛տ Արշակիչ, բա էդքան թանաքն ու գրիչը ինչի՞ համար է, - չէին դիմանում, հարցնում էին:

Իսկ կազմբաժնի վարիչը, զսպելով ներքին անհանգստությունը, պատասխանում էր. «Ուրքան դուք գիտեք, այնքան էլ՝ ես»:

Անհանգստությունը վերածվեց տագնապի, տարածվեց պատերից դուրս՝ վարակելով թատրոնի պատերից այն կողմ արթուն մնացածներին, հետաքրքրասերներին, «կալանվածների» հարազատներին:

Կեսգիշերին մարեցին քաղաքի լույսերը, և ընդհանուր խավարի մեջ կասկածն ավելի խորացավ. ինչու՞ են հանգցնում լույսերը, ի՞նչ է կատարվում, լուսաքողարկու՞մ է (շրջանում չէին մոռացել պատերազմական տարիների լուսաքողարկումները): Ուրեմն պատերա՞զմ է սկսվում: Մարդիկ չարագուշակ բաներ էին մտածում:

Ղափանում ոչ ոք չքնեց այդ գիշեր:

Գիշերվա ժամը 2-ն անց 20. շշակների ոռնոցով քաղաք մուտք գործեց զինվորական ավտոշարայուն, շարժվեց ստադիոնի ուղղությամբ, շարվեց այնտեղ: Ահա և վառվեցին լույսերը: Քիչ անց զինվորականների մի խումբ հայտնվեց բանվորական ակումբի շենքում: Բեմ բարձրացավ և «Կուսակցության և կառավարության հանձնարարությունը կատարելու պատրաստ լինելու մասին» Միքայելյանին զեկուցեց շարասյան պետ,

կլինեն, տուն բերեցի: Անցյալից չխոսեցինք, ինքը խիստ մտահոգ էր, ճնշված էր զգում իրեն: Չասացի էլ, որ քույրս էլ է արքայազն: Ի՞նչ խոսեցինք, ի՞նչ ասեցի: Գուցե արքային էր հիշում: Ասողիկին ասացի՝ հաց կապեց, դրեցի իրենց հետ տարան, պիտի ռազմեղկա անեին: 60-ականներին Երևանում բարձր պաշտոն ուներ, ինքն էր որոշում կոլխոզներին տեխնիկա տալու հարցը: Գիտեմ, որ Մարգարյանը առանձնահատուկ ուշադիր էր Ղափանի հանդեպ: Ինչ հարցով դիմում էին, նա ընդառաջում էր»: Սա անհատի ողբերգությունն էր:

ղափանցի Կոլյա Մուսայելյանը⁴: Ճնշող ու խորհրդավոր լռության մեջ Երևանի ներկայացուցիչը, որին ղափանցիները հիշում են որպես Կենտկոմի երկրորդ քարտուղար, հայտարարեց հանրապետությունից անբարեհույս տարրերին աքսորելու վերնների որոշման մասին, ասաց, որ նրանք կան նաև Ղափանի շրջանում, կոչ արեց կազմակերպված կերպով իրականացնել «կուսակցության հանձնարարությունը» և ... ներկաների սարսափահար հայացքներին ու հարցականներին ի պատասխան արդարացրեց ընկ. Ստալինի որոշումը:

Արդյո՞ք ներկաները կարող էին այդ պահին հայտարարել, որ սխալ որոշում է կայացվել՝ բոլշևիկների կուսակցության ու կառավարության հերթական մարդատյաց որոշումը: Ո՛չ, չէին կարող, բայց գործարքին մասնակցելուց հրաժարվողներ եղան, որ նշանակում է հենց դեմ գնալ որոշմանը:

Շտապել, արագացնել էր պետք. առանց այն էլ շարասյունը Թափ ոլորաններում վթարի պատճառով ուշացել էր: Հապշտապ ճշտեցին ու հաստատեցին շրջանի Պետական անվտանգության մարմնի արած կցումները: Ընթերցում էին աքսորի ենթակա ընտանիքի ավագի անունը, հետո՝ ընտանիքի անդամներինը, ապա հնչում էր կցվածի անուն-ազգանունը⁵: Մարդիկ ահաբեկված էին: Որքան էլ բիրտ ու դաժան էին ժամանակները, անկանխատեսելի էին հետևանքները, միննույնն է, հունիսի 14-ին մենք ունեցանք ժամանակից ու ժամանակակիցներից վեր կանգնած հայրենակիցներ: Նրանցից էր կուսշրջկոմի բաժնի վարիչ Աշոտ Հովհաննիսյանը: Արդյո՞ք զուգադիպություն էր այն, ինչ կատարվեց Հովհաննիսյանի հետ (Երևանում եղել են դեպքեր, երբ կցվածները տհաճ զուգադիպությամբ ընկել են իրենց ընկերոջ կամ բարեկամի տունը, ինչպես օրինակ կուսդպրոցում սովորող **ղափանցիներ Աշոտ Գրիգորի Սարգսյանը և Մակիչ Շամիրի Հարությունյանը**): Ժողովականները քար կտրեցին, երբ աքսորականների ցուցակներն ու կցվածների անունները հրապարակելիս հնչեցին Արծվանիկ գյուղի «տերտերի որդի», աքսորվող Հայկ Տեր-Հարությունյանի և կցված Աշոտ Հովհաննիսյանի անունները:

«Ես սարսռացի, աչքերս մթնեցին... Հայկը քեռուս տղան էր, քեռիս տեր Մեսրոպ քահանան էր, ես որբացել էի, քեռուս տանն էի մեծացել և ստացվում էր, որ պիտի աքսորեի այն մարդկանց, ովքեր պահել-խնամել են որբիս... Ի՞նչ անեի... Ես պիտի աքսորեի իմ ծնողներին, նրանք ինձ համար հայր ու մայր էին: Այդ ի՞նչ ժամանակներ էին... այն էլ պատերազմից հետո, հաղթանակից հետո, մեր ժողովրդի անսահման գրկանքներից հետո», - ասում է Հովհաննիսյանը (այս մասին խոսելիս 99-ամյա մարդը արցունքներ էր թափում):

Հովհաննիսյանը կտրականապես հրաժարվեց կատարել կուսակցական հանձնարարությունը: Ովքեր ճանաչել են այս մարդուն, չեն կարող կասկածել:

⁴Փոխգնդապետ Նիկոլայ (Կոլյա) Շամիրի Մուսայելյանը (1914-1959) Կապանի Ուժանիս գյուղից է, միջնակարգ ու բարձրագույն կրթություն է ստացել Երևանում, մասնակցել Մեծ հայրենականին, կատարել քաղաքական աշխատանք: Պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով: Կյանքի վերջին տարիներին Երևանի կայագորային հոսպիտալի պետի քաղաքական գծով տեղակալն էր:

⁵ Ղափանի այն ժամանակվա անձնագրային բաժնի պետ, Մոդես գյուղից Գուրգեն Ասատրյանի վկայությամբ՝ որոշ կցվածների բաժանվեցին ծրարներ, որոնք պիտի բացվեին սահմանված վայրում և կարդային աքսորի ենթակա ընտանիքի անունը: Այս մասին գրքում:

Կապանցիներն անվերապահորեն հարգում էին Աշոտ Արշակիչին: Խորհրդակցության մասնակիցների քար լուռության մեջ Ավետիքովի սկզբնական հորդորներին, ապա սպառնալիքներին պատասխանեց. «Միննույն է, չե՛մ կարող: Հասկացե՛ք, որք եմ մեծացել, քեռիս ու քեռակինս են ինձ պահել: Նույնն է, թե կալանավորեմ հարազատ ծնողներս»:

Բայց ո՞վ կհասկանար՝ կազեբեիշնիկնե՞րը, միլիցիոներնե՞րը, թե՞ քարտուղարը: Հասկանան- չհասկանան. հրաժարվեց: Ավետիքովը կուսակցական նոր հանձնարարություն տվեց: Առավոտյան նա, իր հետ վերցնելով Հովհաննիսյանին, շարժվեց երկաթգծից վեր՝ տների կողմը, որտեղ բնակվում էր ռազմագերի, անասնաբույժ, Շիկահող գյուղից Գրիգոր Ստեփանյանը:

Իսկ օրեր անց շրջկոմի բյուրոն աննպատակահարմար համարեց Հովհաննիսյանի ներկայությունը շրջկոմում և աշխատանքի ուղարկեց ՖԶՈՒ՝ պրոֆտեխուսումնարան:

Թվում էր՝ Հայկ Հարությունյանին աքսորելու նախադրյալներ չպիտի լինեին: Ճիշտ է, նա «տերտերի տղա էր» (եղբայրը՝ Գրիգոր Տեր-Հարությունյանը, Դաշնակցական հայտնի գործիչ էր, դեռ երիտասարդ, 1905-1906թթ. հայ-թուրքական կռիվների ժամանակ Արծվանիկի հերոս խմբապետ, 1919-ին Ազարակ-Եղվարդի ճակատամարտում⁶ արծվանիկցիների քաջարի առաջնորդը՝ նույն կովում ցավալիորեն զոհված: Մյուս եղբայրը՝ Արարատը, երիտասարդ կոմունիստ էր, ում գնդակահարել էր Ղափանի ուժերի հրամանատար Գերասիմ Աթաջանյանը⁷, Արծվանիկի հոգևոր հովիվ, հանրահայտ ուսուցիչ Մեսրոպ Տեր-Հարությունյանի որդիներն էին): Պիտի որ գոնե Արարատի շնորհիվ նա տեղ չգտներ ցուցակում: Սակայն 48-ի մի դիպված խոսում է այն մասին, որ «ում ուզեին, կաքսորեին», ում դեմ ասես, կարող էին գործ սարքել: Ինքը՝ Հայկն էլ զարմացած էր, բայց միայն հետո իմացավ, որ աքսորվել է որպես դաշնակցական ընտանիքի անդամ:

Զգնահատվեց կոմունիստ Արարատի եղբայրը լինելը, մոռացվեցին հորեղբոր՝ Խաչատուր Տեր-Հարությունյանի՝ խորհրդային հաստատություններին արած բարեգործությունները, «զնահատվեց» «տերտերի տղա» ու «խմբապետ»-ի եղբայր լինելը: Իսկ դիպվածը բնակարանի պատմությունն էր: 1948-ին Արծվանիկի տնտեսության գործերը կարգի բերելու համար նրան կանչեցին շրջկոմից և պարտադրեցին գնալ հայրենի գյուղ և աշխատել այնտեղ: Հայկի գյուղ գնալն ու քաղաքի բնակարանի համար պայքարը մեկեն սկսվեցին: Գործկոմը պահանջեց ազատել բնակարանը և գյուղ տեղափոխել նաև ընտանիքը: Մերժեց: Կանչեց շրջկոմի առաջին քարտուղար Աշոտ Սարգսյանը և մերժում ստանալուց հետո սպառնաց. «Գնա՛, բայց չփոշմանես»:

Հարություն Մանգասարյանը⁸ գրում է. «1949թ. Ղափանի շրջկոմի քարտուղարն էր Աշոտ Մարտինիչ Սարգիսյանը, անտակտ էր, աշխատեց մոտ երկու տարի, հեռացված է

⁶ Տեր Մեսրոպ քահանայի մանկավարժական գործունեության մասին՝ Է. Մանուչարյան, Հ. Սահակյան, «Արծվանիկ» գրքում: Գրիգոր Տեր-Հարությունյանի մասին հայ-թաթարական բախումների շրջանում՝ Գ. Սմբատյան, Մյունիքը փորձության մեջ. հայ-թաթարական բախումները, Երևան, Անտարես, «Քսանյոթամյա առաջնորդը...» գլխում: Եղվարդ-Ազարակի ճակատամարտում նրա դերակատարության մասին՝ Գ. Սմբատյան, Մյունիք. Պատմություն և հիշողություն, Երևան, Անտարես, 2019, «Ճակատամարտ Քաշունիքում...» գլխում:

⁷ Այս մասին՝ նույն տեղում, «Ուրգույթի հավերժական ննջեցյալը» գլխում:

⁸ Հարություն Խաչատուրի Մանգասարյան (1903-1992), գյուղ Քաջարան, վերաբնակվել է Ծավում և իրեն համարում էր ծավցի: Ստացել է տարրական կրթություն, 20-ականներին տեղափոխվել Երևան, գործուղվել Մոսկվա ու սովորել Քիմիական պաշտպանության ռազմական ակադեմիայում: Երևանում կատարել է կուսակցական աշխատանք: Կազմակերպել է հեղափոխության թանգարանը: Մասնակցել է պատերազմին, վիրավորվել: 1946-1950թթ. Ղափանի շրջանային գործկոմի նախագահն էր: Այնուհետև աշխատել է Գերագույն խորհրդում և Ազգային արխիվում: Գերազնիվ, սկզբունքային ու հայրենասեր մարդ էր, մեծ հարգանք ուներ հայրենի եզերքում: Ունի արժեքավոր հուշեր: Նա հայ-թաթարական բախումների ժամանակների Վերին Ձորի պաշտպանության հերոս ղեկավար Թևատրոս Մանգասարյանի եղբոր որդին է: Վերջինիս մասին՝ Գ. Սմբատյան, Մյունիքը փորձության մեջ, Երևան, Անտարես, 2017, Վերին Ձոր, «Պատերազմն ամպերից վեր» գլխում:

աշխատանքից խիստ բացասական իմաստով, նրան փոխարինեց իմ սիրելի ընկեր, հաստատական, մարդամոտ Երվանդ Մելքոնյանը⁹: Նրա շնորհիվ տասնյակ մարդիկ փրկվեցին ձերբակալություններից ու բանտերից: 1949 թվականին մարդկանց ընտանիքով աքսորելու հերոսներ էին ՀԽՍ ՆԳՄ գնդապետ, որի ազգանունը չեմ հիշում (դա պետական անվտանգության ներկայացուցիչ մայոր Վ.Ս.Բուդաղովն էր.- Գ.Ս.), պետականության Ղափանի բաժնի պետ, գնդապետ Հայկ Նախշիքարյանը, Ա.Ս.Սարգիսյանը՝ շրջկոմի քարտուղարը: Խիստ գաղտնի խորհրդակցություններից հետո օրգանի աշխատակիցները և Ղափան քաղաքի վստահելի անձինք բեռնատար մեքենաներով, գիշերը գնացել, ընտանիքները փոխադրել էին Ղափան, լուսաբացին բաց վագոններում նստեցրել: Ղափան քաղաքում, գյուղերում լաց ու կոծ էր ու զայրույթ: Հայրենական մեծ պատերազմում հաղթանակից հետո ու՞ր են տանում այդ անմեղ մարդկանց և այլն, և այլն:

Թեև շրջանային սովետի նախագահը ես էի, բայց այդ գաղտնի ժողովների և այդ օպերացիայի մասին ինձ ոչինչ չասացին և մասնակից չեն դարձրել: Օրվա հերոսը, վստահված անձը Ա.Ս.Սարգիսյանն էր, որը և խրախուսվեց: Բարբարոս գազանություն. ես հետո իմացա անվանի որմնադրին՝ շուրջ 90 տարեկան (անուն-ազգանունը մոռացել եմ), հիվանդ վիճակում բարձրացրել են վագոն, հաջորդ օրը մահացել է: Տաթևի վանքի վերանորոգող վարպետը: Այն ժամանակ չգիտեմք, որ տանում են Ալթայի երկրամաս»¹⁰:

Ղափանի շրջկոմի քարտուղար Միլիտոս Դավթյանը երկրորդն էր: Արհամարհելով զգուշացումները՝ նա իր հետ վերցրեց սննդամթերքի պաշար, շտապեց կայարան, հանձնեց արտաքսվող քրոջը... և ազատվեց աշխատանքից: Սուրեն Միքայելյանն ու Աշոտ Սարգսյանը ՀԿ(Բ)Կ Կենտկոմին ուղղված զեկուցագրում¹¹ չմոռացան ցույց տալ իրենց «սկզբունքային, բոլշևիկյան անհանդուրժողական» գործելակերպը և որպես օրինակ ներկայացրին քարտուղար Դավթյանին. «Աքսորականների շարքում էր ՀԿ(Բ)Կ Ղափանի շրջկոմի քարտուղար ընկ. Մ. Դավթյանի քույրը, որի ամուսինը (Վերին Հանդ գյուղի կոլտնտեսական) եղել է լեգեոնական»¹²:

⁹ 1950-1953 թթ. ՀԿ(Բ)Կ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար, Կապանից, Մեսրոպ Մազիստրոս Տեր-Մովսիսյանի քրոջ որդին: Նրա մասին է սույն գրքի «Աքսորից հետո. լինում էր և այսպես» պատմությունը:

¹⁰ Հարություն Մանգասարյան, Նամակ այն օրերի մասին, ձեռագիր, պահպանվում է իմ անձնական արխիվում:

¹¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, էջ 74: Հրապարակման հեղինակը՝ Ամատունի Վիրաբյան:

¹² Միլիտոս (Միքայել) Դավթյանը (1920-1993), Փիրմազրա գյուղից է, ավարտել է Ղափանի մանկավարժական տեխնիկումը, աշխատել որպես ուսուցիչ N1, ապա տնօրեն՝ Տաշտունի դպրոցներում: Բրեստի քաջարի պաշտպաններից է, թեև շրջկոմի քարտուղարն էր, սակայն կնոջ՝ Քնարիկի «կուլակային» ծագման պատճառով շարունակ հետապնդվում էր: Այս դեպքերից հետո փաստորեն Պետական անվտանգությունը չվստահեց նրան և ազատել տվեց կուսակցական աշխատանքից: 1957-1961թթ. Ղափանի շրջժողկրթբաժնի վարիչն էր: Դավթյանը տեղափոխվել է Երևան, որպես ուսուցիչ աշխատել Սարի թաղի դպրոցում, այնուհետև մաթեմատիկական թեքումով N3 դպրոցում: Երկար տարիներ ղեկավարել է մայրաքաղաքի Ստ.Շահումյանի անվ. N1 դպրոցը: Մահացել է 1993թ. նոյեմբերին, թաղված է Շահումյանի գերեզմանատանը: Քույրը Արուսյակ Աբրահամյանն էր, «լեգեոնական» ամուսինը՝ Անուշավան Առաքելյանը: 1956թ. նրանք վերադարձան Հայրենիք և մինչև իրենց կյանքի վերջը ապրեցին Վերին Հանդ գյուղում:

Մեկ ուրիշն էլ կար՝ Ագարակ գյուղից Գաբրիել Աղախանյանը, ում ընտանիքի հետ կայարան էին բերել: Կապանի N 3 դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի Լատրա Աղախանյանը պատմում է. «Հիշում եմ՝ հունիսի 14-ին մայրիկիս փեշը բռնած հասա Ղափանի կայարան: Այստեղ լաց ու կոծ էր: Գաբրիելը բարձրաձայն վիրավորեց Ստալինին, ասաց. «Էդ սրիկա Ստալինը ի՞նչ է ուզում մեր ժողովրդից»:

Մայրս վախեցավ ու խնդրեց ձայնը գլուխը չգցել. «Ուզում ես մե՞զ էլ Սիբիր քշեն»:

Այդ պահին նույն հարցը ամբողջ կայարանն էր տալիս:

Հունիսի 14-ին բոլորն են խեղճացել: Ընդվզում դասական իմաստով չի եղել, չէր էլ կարող լինել: Եղել են հատուկենտ, այն էլ բացահայտ ընդվզողներ, գլխավորապես՝ կանայք: Կինը համարձակ էր, կինը անձնագրի էր, ավելի զգացմունքային: Արդյո՞ք 49-ին եղել են այնպիսի համարձակ քաղաքացիներ, ովքեր հասարակության ներկայությամբ բարձրաձայն հայհոյել են ժողովուրդների առաջնորդ Հայր Ստալինին: Կրկին կանայք են եղել: Միայն կինը կարող էր ոտքի տակ տալ կուռքերին:



Հերիքնազ

Մեզ հայտնի միակ կինը Հերիքնազն էր՝ Շիկահողից՝ Ներքին Հանդի Լենինի անվան կոլտնտեսության նախագահ Գեդեոն Խաչատրյանի մայրը: Ինչէ՛ր ասես, որ չէր տեսել այս կինը. 37-ին տարել էին փեսային՝ Մուշեղին¹³, ու գնդակահարել Գորիսի բանտում: Պատերազմում երկու տղա էր կորցրել՝ Արամին ու Վարդանին: Ծեզին այգիներում էր. ո՞վ էր նրան հայտնել, որ տանում են նաև աղջկա ընտանիքին, հայտնի չէ, ինչպես որ հայտնի չէ, թե ով էր սև ցուցակ մտցրել Բաբայան-Տեր-Գևորգյան ընտանիքին, որ ամենից լուսավորն ու գիտունն էր այս կողմերում: Տանում էին աղջկան ու թոռներին... Հնիհն հասավ գյուղամեջ, և գյուղն իր խորհրդային շրջանի գոյության մեջ լսեց չլսված խոսքեր. «Ստալի՛ն, քո հոր գյոռը... Ստալի՛ն, շները քո բերանում ... Ստալի՛ն, շները քո բեղերում... քո հոր գյոռը... սասկես դու, Ստալի՛ն, շների փայ դառնաս, Ստալի՛ն... ոսկորներդ շները քաշ տան լքարշ տան}...», ու էլի ինչ ասես, ինչ մտքովն անցավ, ինչ գիտեր:

Հերիքնազի բերանը փակեցին և տուն տարան: Նա վտանգում էր որդուն:

Զավակներին տանելուց հետո Հերիքնազը մի քանի տարի ապրեց, բայց դա ապրել չէր: Այդ եռանդուն կինը համրացավ, չխոսեց: Խոռվեց: Գալիս, նստում էր Թումանյանց տան տակ ու անթարթ նայում էր հսկայական ձորից այն կողմ՝ արևկող լանջին գտնվող աղջկա՝

¹³Գևորգյան ճեմարանի ուսանող, բանահավաք, ուսուցիչ Մուլթան (Արքայիկ Տեր-Գևորգյանի) և ՀՅԴ-ական, գնդակահարության դատապարտված Շարիար Բաբայանի հարազատ եղբայրը:

կողպված դռներով տանը: Նայում էր, մերթ փոքրաձայն, մերթ լուռ լաց էր լինում, մինչ մութն ընկնում էր, ու գալիս, տուն էին տանում: Այսպես՝ ամեն Աստծու օր:

Վերջին երկու ամսում ինքն իրեն սովամահության դատապարտեց. հիվանդ չէր, բայց հրաժարվեց ուտել և մահացավ... 1953 թվականի մարտի 5-ի պատմական օրը... Երկուսն էլ միասին հեռացան այս աշխարհից:

Հերիքնազը... Թերևս քաղաքականապես հասուն միակ մարդը Սյունիքում: Հիմա ո՞վ է հիշում հունիսի 14-ի ամենաըմբոստին: Անգամ հայրենի գյուղում նրան վաղուց մոռացել են:

Մի «ըմբոստ ելույթ» էլ եղել է Ուրալյան լեռներով անցնող գնացքի բացված դռան մոտ: Գորիսցի Սոֆյա Առուստամյանը, տեսնելով հեռվում՝ բլրին, թառած ու երկար ժամանակ գնացքին ուղեկցող Ստալինի հսկայական նկարը, չանչ էր արել ու կանչել. «Բո՛յդ թաղեմ, ա՛յ Ստալին: Սրան տես՝ պոչն ու բեխերը մինչև ուր ա շաղ տվել»: Մաստեցին, ասացին՝ սու՛ս կաց, կլսեն, գլխներին մի բան կանեն:

- Սրանից ավելի ի՞նչ պիտի անեն: Մեր վագոնի գրագետ մարդիկ ասում են՝ մեզ Սիբիր են տանում: Սիբիրից դենը տեղ կա՞, որ տանեն:

Մեզ հայտնի վաշտապետի աղջկա՝ Էմմայի գրույցի մի կտորը խորհելու, մայր ու աղջկան անսահմանորեն սիրելու տեղիք է տալիս. «Մինչև Ալտայսկի կրայ {Ալթայի երկրամաս} մայրս՝ Սոնան, լաց էր լինում, սակայն շարունակ ասում էր, որ եթե Ստալինը իմանա, որ էսպիսի անարդարություն է լինում, հարցը կլուծի: Մինչև վերջ էլ չհասկացավ կատարվածը և պնդում էր, որ ինքը Ստալինից գոհ է և երգում էր. «Զա՛ն Ստալին, ջա՛ն Ստալին»:

Մի օր վագոնում ասացի՝ թաղեմ Ստալինին: Վախեցավ, ասաց՝ ա՛յ կապը կտրած, ձենդ կտրի, կիմանան, մեզ կտանեն:

Ասի՝ մամա՛, դե՛ հեն ա տանում են էլի:

Ասաց՝ չգիտեմ, բերանդ խուփ պահի»:

Պարզվում է, որ կարմիր պագոնավոր ու կարմիր գլխարկավոր զինվորներին և կցված կուսակցական աշխատողներին դիմադրելու համար պիտի լինել պատանի, երբ դեռ չես հասկանում աշխարհի չարն ու բարին, երբ բան չունես կորցնելու, ախ ու վախ չունես: Առաջաձոր գյուղից բռնադատված Դավիթ Ոսկանյանի որդին՝ գյուղից հեռացած և Սյունիք գյուղում բնակվող պատանի Շմավոն Ոսկանյանը¹⁴, այդ պատանիներից էր: Լուսաբացին թակել էին դուռը, ինքն էր բացել ու տեսնելով զինվորականներին ու կուսակցական, պետական աշխատողների՝ հարցրել էր. «Էս ի՞նչ հաշիվ ա»:

Ասել էին. «Հավաքեք իրերը, դուք ընտանիքով արտրվում եք»:

Երբ հարցրել էր պատճառը, սրանք բացատրել էին, թե պատճառը հայրն է:

¹⁴ Ոսկանյանը 16 տարեկան էր, ծնվել է 1933թ.:

- Ձեր մերն էլ... Էս զինվորների մերն էլ... Էս ոչ մի տեղ չեմ գնա:
- Մենք ասում ենք՝ Ընկեր Ստալինի հրամանն է, պատճառն էլ հայրդ է:
- Ստալինի մերն էլ... իմ հոր մերն էլ...

Արի՛ ու մի՛ հիշիր. «1935թ. դեկտեմբերի 1-ին առաջավոր կոմբայնավարների խորհրդակցության ժամանակ Ա. Գ. Տիլբան իր ելույթում ասել է. «*Хоть я и сын кулака, но я буду честно бороться за дело рабочих и крестьян*»! («Չնայած ես կուլակի որդի եմ, սակայն ազնվորեն պայքարելու եմ բանվորների և գյուղացիների գործի համար»): Ստալինն արձագանքել է նրա խոսքին. «*Сын за отца не отвечает*» («Որդին հոր համար պատասխանատու չէ»): Այս խոսքերը 1935թ. դեկտեմբերի 4-ի համարում տպագրեց «Պրավդան», որը, ինչպես նկատում է պատմաբան Հարություն Մարությանը, «դարձավ ուղենիշային, կարելի է ասել՝ թմբկահարվում էր որպես մարդկային վերաբերմունքի դրսևորում, սակայն չդարձավ գործնական»¹⁵:

Պատանին գործնականում իր արարքով ու խոսքով հաստատում էր առաջնորդի պատվիրանը. «Որդին հոր համար պատասխանատու չէ»:

«ՀՈՒՆԻՄԻ 14-Ի ԼՈՒՍԱԲԱՑԸ: ЛУЧШЕ ИХ СОСЛАТЬ [ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՆՐԱՆՑ ԱՔՍՈՐԵԼ]:
Ա՛Ր, ՄԻԱՅՆ ԹԵ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆՆ ԻՄԱՆԱՐ»

(Հատված)

...Եվ ո՞ւմ էին արքայություն... պատանիների, աղջիկների, երիտասարդների, երեխաների, որոնց հայրերը 37-ի զոհեր էին, իրենք՝ անբարեհույս տարրեր: Այդ ի՞նչ վնաս պիտի պատճառեին պատերազմից հետո հյուղակներում, քարուքանդ տներում, գետնափոր կացարաններում և նույնիսկ քարանձավներում կուչ եկած, հազիվ իրենց գոյությունը քարշ տվող թշվառները:

Հենց այդպես՝ քարանձավներում: Գորիսում դրանք ավելի շուտ կոչվում են Քրատակեր (քարի տակ): Գորիսի Բռուն {Ակներ} գյուղի քրատակերից մեկում ապրում էին 37-ին գնդակահարված հոր զավակները՝ Ադամյան եղբայրները: Գյուղ էին ուղարկել Արսեն անունով կոլխոզի մի նախագահի և գյուղի ավագանին՝ կուսակցական ակտիվը, ժողովրդի թշնամու զավակներին գլխի գցեցին. «Դուք տանը պիտի ապրեք, իսկ նախագահը մնա քուչեքո՞ւմ: Դու՛րս եկեք, կորե՛ք»:

Որբն ինչ տարիքում էլ լինի, որբ է մնում: Հասուն տղաներ էին՝ 20-22 տարեկան, մեկը՝ կոլխոզում աշխատող, մյուսը՝ բանակում հիվանդացած ու տուն վերադարձած, բայց «ժողովրդի թշնամու զավակ» խարանը ճակատներին: Կարո՞ղ էին դիմակայել: Դժվար թե: Ջահելներին վնդեցին տնից, ու նրանք հարկադրված էին տեղափոխվել Քրատակ:

¹⁵ Հարություն Մարության, Ո՞վ էր մեղավոր, Հրանուշ Խառատյան, Գայանե Շազոյան, Հարություն Մարության, Լևոն Աբրահամյան, Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. Պատմություն, հիշողություն, առօրյա, Երևան, Գիտություն, 2015, էջ 218:

Հունիսի 14-ի լուսաբացը հիշելիս Վոլոդյա Ադամյանը արցունքախեղ էր լինում: Ինչպե՞ս կարող է մոռանալ այդ օրը, երբ թեև լավ ապրուստի չէր, բայց ջահել էր, հուսառատ: Միրահարված տղա էր Վոլոդյան, գծվում էր համագյուղացի Մարուսյայի համար: Ինքն իր համար, իր մտքերի հետ, քարանձավում՝ հաշտ ու խաղաղ: Հազիվ տառաճանաչ, բայց վաղ առավոտյան արթնացել նամակ էր գրում Մարուսյային: Նամակն ավարտեց. «Մարուսյա՛ ջան, կամ սպասի՛ր ինձ, կամ եթե չես ուզում, ամուսնացի՛ր»: Պարզ, գեղջկական մտքերով, ինքնագոհ շունչ քաշեց՝ համոզված լինելով, որ նամակը ստանալուն պես աղջիկը կթողնի հայրական օջախն ու կհայտնվի Քրատակում: Բայց շաբաթն ուրբաթից շուտ վրա հասավ: Քրատակ մտան ռուս մի զինվորական (մայոր), երեք զինվոր ու ակներցիներ Տիգրանն ու Սամսոնը: Մայորը դես ու դեն նայեց, շվարեց, համրացավ: Մի քանի րոպե լռությունից հետո խոսեց. «Разве это дом? Это же пещера. Здесь должны жить медведи, и еще говорят, что люди богатые и враги народа. Лучше их сослать» {Մի՞ թե սա տուն է: Սա քարանձավ է: Այստեղ պիտի որ բնակվեն արջերը և դեռ ասում են, որ հարուստ մարդիկ են ու ժողովրդի թշնամիներ}:

Այդ պահին եղբայրը ներկայացավ մայորին, պատվի առավ ու նրան հանձնեց իր «հիվանդության պատմություն»-ը: Մայորը կարդաց և հրամայեց՝ оставить {թողնել}, ու պահանջեց ուղեկիցներին հետևել իրեն: Հույս ծագեց, որ զինվորականին կհաջողվի ազատել տղաներին, բայց կես ժամից քարանձավին մոտեցավ «Ստուդեբեկեր»-ը ու հնչեց հրամանը. «А ну, собирайте ваши вещи, берите сколько хотите» {Հապա, հավաքեցե՛ք ձեր իրերը, վերցրե՛ք ինչքան ուզում եք}:

Ի՞նչ ունեին, որ ինչ բարձեին:

Մեքենան շարժվեց, հասավ գյուղի վերջնամաս, կանգ առավ, որտեղ և... ինչպիսի՛ երջանկություն. Վոլոդյան տեսավ բեռնատար խցկված Մարուսյային ընտանիքի հետ միասին: Անբացատրելի զգացում՝ ուրախություն և հրճվանք սիրած աղջկան հասած դժբախտության համար: Ամաչեց, բայց հետո հասկացավ՝ Մարուսյայի հետ թեկուզ դժոխքում:

Առաջաձոր գյուղում զինվորներով բեռնատարը մոտենում է Մայթաղ Բախշյանի տանը: Գյուղական խորհրդի նախագահը, որը հնազանդորեն հետևում էր իրադարձությունների ընթացքին, համարձակվեց հարցնել. «Բա սրանց ինչո՞ւ եք տանում»:

Տանում էին Մայթաղին ու «չուլ ու փալասի մեջ, վախվորած, կուչ եկած, լաց լինող» նրա տղաներին՝ Համլետին, Բաբկենին, Էմիկին: Մայթաղը դուրս եկավ տնից «բոկոտն ու կիսամերկ», և առաջինը բարձրացավ մեքենայի վրա:

- Ո՞ւր ես առաջ ընգնում, հլա սպասի, տեսնենք ինչ ա լինում, - սաստեցին համագյուղացիները:

- Մին չի,՞ շենումն ըմ, թե ջհաննամդարասիում¹⁶:

¹⁶ Թուրք.՝ Դժոխքի ձոր:

Մին է, այսինքն՝ մեկ է, միևնույն է... *Лучше их сослать.*

49-ի սեպտեմբերին Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի վառվռուն երազներով ուսանողուհի Վրաժիկ Բաղդասարյանի (հետագայում լեզվի և գրականության ճանաչված, խստապահանջ ու սկզբունքային ուսուցչուհի) գրած շարադրությանը հատուկ են գեղարվեստական պատկերները՝ Առաջածոր գյուղի պայծառ լուսաբաց, վառ արև, մեքենաներից ահաբեկված մարդկանց վազք դեպի եկեղեցի և ոստիկանապետի հորդորը՝ կաղոթե՛ք Ալթայի երկրամասում: Նախ օրն ամպամած էր, հետո Առաջածոր և մյուս գյուղեր միլիցիան մուտք չէր գործել: Ոստիկան չկար, ի՞նչ մնաց ոստիկանապետ: Իսկ Ալթայի մասին ոչ ոքի չէր կարող հայտնի լինել: Գլխավորը ուսուցչուհին չի կտրվել իրականությունից: Նրա թանկագին մի պատմություն մեզ համոզում է, որ փորձության մեջ են հայտնվել ոչ միայն համայնքը, այլև նրա մաս կազմող կենդանի արարածները: Այդ օրը՝ հունիսի 14-ին, երբ տերերին նստեցրին բեռնատարի մեջ, Չամբարը նրանց հետևից վազեց թափքի վրա թռչելու համար: Մի կողմ քշեցին: Այնքան պտտվեց մեքենայի շուրջը, մինչև որ մեքենան հեռացավ գյուղից: Հետո շանը տեսան տան կտրին: Նստեց, կլանչեց երկար, շատ երկար ու «ասես մեկի հրմշտոցից կտրից վայր ընկավ մեր բակը», - գրում է ուսանողուհին:

Մեռնե՞լ էր ուզում. աչքի առաջ տերերն անհետացել էին: Շանն ուշքի բերին, կենդանին ծուլորեն ոտքի կանգնեց, հեռացավ՝ քարշ տալով վիրավոր մարմինը:

«Ես վերջին պահին տեսա նրա արցունքները, որ անարգել հոսում էին աչքերից: Շունը դուրս եկավ մեր դարպասից, գնաց, թե ու՞ր, ոչ ոք չիմացավ, ոչ ոք չտեսավ: Շունը խելագարվեց ու անհետ կորավ», - մորմոքում է Վրաժիկը (Ղափանում եղավ դեպք, երբ կինը լքեց ամուսնուն՝ պատճառ բերելով ԶԱԳՄ-ի գրանցման բացակայությունը: Ակամայից հիշում ես ժողովրդական իմաստությունը՝ Շունը՝ հավատարիմ, կինը՝ անհավատարիմ):

Առաջածորում տիրոջ հանդեպ որքան հավատարիմ էր Չամբար շունը, հազարապատիկ անհավատարիմ ու երախտամոռ էին կոմկուսն ու իշխանությունները երկրում սեփական ժողովրդի հանդեպ:

Հունիսի 14-ին անօգնական ժողովրդի դեմ առյուծ կտրած զինվորական ստորաբաժանումները, տեղական էնկավեդեն, դատախազությունը անհոգի էին ու ստորաքարշ: 49-ի աքսորի պատմությունն ունի՞ արդյոք Մելսիդա Գևորգյանի նման ճակատագիր, կա՞ արդյոք երեխայի հանդեպ նման անսիրտ, անկարեկից վերաբերմունք¹⁷... Մելսիդան ապրում էր Լենինականում, հայրը՝ Աղասի Գևորգյանը, զոհվել էր պատերազմում, մայրը Վարդն էր, աշխատում էր տեքստիլում: Վարդի քույրը՝

¹⁷ Կա նման պատմություն, բայց առանց դիմադրության, լուռ հնազանդության պայմաններում: Տաթևում բազմազավակ ընտանիքի հայր Խաչատուրը, ի վիճակի չլինելով պահել երեխաներին, նրանցից Նավասարդին հանձնել էր եղբոր՝ Մովսես խնամքին: Հունիսի 14-ին Մովսեսն նստեցրին «կանաչ ավտոն»: Տաթևցիները եկան, խնդրեցին զինվորականներին ուրիշի երեխային չտանել, բայց դեմ ընկան սրանց սառը հայացքներին ու մի քանի անգամ լսեցին՝ Молчать [Լռել]: Փորձեցին պատանուն փրկել, բայց բան դուրս չեկավ: Այնքան գրեցին, որ ազատման որոշում ստացան: Բայց հիմա էլ չուզեց վերադառնալ: Մովսեսին հացահատիկի աղացում էր աշխատում, հարմարվել էր, լավ էին ապրում, ասաց՝ էլ ուշ է, գնա՛մ ի՛նչ անեմ, Տաթևի կոլխոզում տանջվե՛մ:

Արևհատը, ամուսնացել էր Սպիտակի Սարամեջ (Չոթուր) գյուղում: Ամուսինը՝ Ստեփան Մխիթարյանը, ռազմագերի էր: Ամառային արձակուրդները երեխան անցկացնում էր Սարամեջում՝ մորաքրոջ տանը: Նա լավ էր գգում մորաքրոջ երեխաների շրջապատում: Վարդի մյուս քույրը բնակվում էր Ղափանում, ամուսինը Ղափանի զինվորական կոմիսար Սուրեն Գասպարյանն էր՝ Սպիտակից: 49-ի ամռանը մայրը երեխային Սարամեջ ուղարկեց, իսկ ինքը Ղափան մեկնեց՝ քրոջ տուն:

Հունիսի 13-ին մորաքրոջ ամուսնու՝ Ստեփանի, Արևհատի ու երեխաների հետ Մելսիդան հյուր գնաց Ստեփանի քրոջ տունը, որի ամուսինը՝ Աղասին, ևս ռազմագերի էր եղել: Հունիսի 14-ի առավոտյան հայտնված զինվորներն ու նրանց ուղեկցողները պահանջեցին, որ հավաքեն իրերն ու նստեն բեռնատար: Աքսորում էին թե՛ հյուր գնացած Ստեփանին և թե՛ տանտիրոջը՝ Աղասուն: Ինչ-որ թղթեր հանեցին, ու երկու-երեք հոգի սկսեցին վիճել Արևհատի և Ստեփանի հետ: Սրանք կարծում էին, թե Մելսիդան Ստեփանի աղջիկն է: Վերջիններս ասում էին. «Նայեցե՛ք թղթերին, հասկացե՛ք, Գևորգյան և Մխիթարյան: Այս երեխան ի՞նչ կապ ունի: Նրա հայրը գոհվել է, մայրը Ղափանում է, շուտով կգա»:

Այդ ժամանակ կազմեցին մեկը լուծեց թնջուկը, որ հեռու էր տրամաբանությունից. այս երեխան Գևորգյան Աղասու երեխան է: Էլ չենք խոսում, վերջ:

Հիմար գուգաղիպություն, ճակատագրի խաղ... Հետո ասում են՝ անունը չի կարող որոշել մարդու ճակատագիրը... Բանն այն էր, որ Ստեփանի քրոջ ամուսինը նույն անուն-ազգանունն ուներ, ինչ որ Մելսիդայի հայրը, այն է՝ Աղասի Գևորգյան: Ինչպես ասացինք, Աղասին ևս ռազմագերի էր, մի քանի անգամ նրան կանչել էին Էնկավեդե, սպառնացել էին՝ ինչու՞ վերջին գնդակը չես պահել քեզ համար, ինչու՞ ինքնասպան չես եղել: Պահանջում էին, որ երեխային նույնպես մեքենա նստեցնեն: Ստեփանը կրակն ընկավ: Զինվորների գլուխը չէր մտնում, ոչ ոք չէր հավատում, որ սա գուգաղիպություն է: Ստեփանն ամեն քայլի դիմում էր երեխային հայրենիքում պահելու համար: Երբ մոտեցան, Ստեփանը դիմադրություն ցուց տվեց: Կատաղած ռուս զինվորը հրացանի խզակոթով հարվածեց Ստեփանի գլխին: Գլուխը պատռվեց, ու արյունը հոսեց դեմքին: Ստեփանը հանեց թաշկինակը, սրբեց արյունն ու զինվորի երեսին նետեց. «Ոչինչ, պատերազմի ժամանակվա արյունոտ թաշկինակը թող խաղաղ ժամանակ էլ արյունոտ լինի»:

Դիմադրությունն անիմաստ էր, «կարմիր պագոնավորները» անդրդվելի էին, մնում էր շտապ հավաքել իրերը: Մնացածը խորհելու բան է. աչքի առաջ մի քանի ըոպեում հասունացավ անմեղ երեխան:

«Սկզբում ես ուզում էի թողնել ու փախչել այդտեղից, գնալ, հասնել մայրիկիս: Գիտեի, որ ինչ-որ վատ տեղ են տանում, վախենում էի ավտո նստել: Բայց այն պահին, երբ զինվորի հարվածից հետո տեսա Ստեփանի գլխի արյունը, մի այլ ցանկություն համակեց ինձ... Ո՛չ, ես պիտի գնամ նրանց հետ, ուր էլ որ տանելու լինեն: Ես նրանց մենակ չեմ թողնի, նրանք իմ պատճառով չպիտի տուժեն... ու ճչացի՝ մորաքույր, ես էլ եմ գալիս ձեզ հետ»:

Ու աղջնակը թռավ բեռնատարի վրա:

ԺՈՐԱ ԱՎԱԳՅԱՆ¹⁸

ԻՆՉՈՒ՞ ԱՄԱՑԻ...

Ծնվել եմ 1928-ին Փիրմազրա գյուղում¹⁹: Հայրս²⁰ եղել է գյուղի Հեղկոմի նախագահը: Իսկ մինչև խորհրդային իշխանության հաստատումը եղել էր Բաքվում, ծառայել հայկական զորամիավորումներում: Բաքվի հայկական զորանոցի զինամթերքի պահեստապետն էր, շատ կտրիճ մարդ էր, Բաքվի պաշտպանության հանար կռվել էր, դաշնակցական էր, նվիրված ազգային գաղափարներին: Պատմում էին, որ ջահել ժամանակ Բաքվում նստելիս է եղել կառքի մեջ, մյուս կառքի մեջ դրել է մաուզերը և կառապանին հրամայել քշել իր հետևից: Բաքվում շատ պատմությունների մեջ էր ընկել, բռնել էին, փորձել էր փախչել, չէր հաջողվել: Հաջողվել էր երկրորդ անգամ ու երբ մտել էր տուն, տեսել էր իր տան պատերը քանդել, տարել են թաքցրած ոսկեղենը: Նրան անձամբ ճանաչել էին Ազգային խորհրդի անդամները, նաև Ստեփան Շահումյանը: Շահումյանի մոտ մտնելու պրոպոսիտ (անցագիր) ուներ: Հորեղբայրս՝ Շամիրը, նույնպես դաշնակցական էր, հայտնի էր դարձել 11-րդ Կարմիր բանակի դեմ կռիվներում: Նժդեհը գիտեր երկուսին էլ: Երբ նա մեր գյուղը եկավ, մերոնք հյուրասիրություն կազմակերպեցին: Նժդեհը մի գիշեր մեր տանը մնաց: Հայրս ասում էր, որ երբեք չի մոռանա Նժդեհի խոսքերը: Նժդեհն ասել էր.



Տայգայում, աջից՝ Ժորա Ավագյան, Սուրիկ, Գրիշա, Հայրապետ

«Դուք էստեղ ձեզ համար հանգիստ նստել, ուտում-խմում եք, իսկ Ագուլիսում մերոնց կոտորում ու տները վառում են»: Դրանից հետո ցորենը ծախել ու մաուզեր էր գնել: Իսկ Պարսկաստան անցնելիս՝ հրաժեշտին, մեր գյուղացիներին ասել էր. «Մենք գնում ենք, դուք՝ մնում: Համոզված եղեք՝ բոլշևիկները ձեզ ոչինչ չեն տալու»:

Հորս տարան 37-ին: Մենք երեխաներ էինք: Երբ եկել էին տանելու, մեզ մեկուսացրին, որպեսզի ավելորդ չհուզվենք: Բայց քանդեցին տեղաշորը, բարձերը, տան կտուրը, մարագը ու եղ ամենը՝ մաուզերը գտնելու հույսով: Թղթեր ու զենք էին փնտրում: Ոչինչ չհայտնաբերեցին: Հորս տանելուց առաջ տարել էին հորեղբորս՝ Շամիրին: Հորեղբայրս

¹⁸ Երկրաբան, աշխատանքում գնահատված, ազնիվ, պարկեշտ, բայց ամբողջ կյանքում տուժած մարդ, ծնված 1938թ.: Գրառել եմ 2012թ. հունվարի 15-16-ին:

¹⁹ 1949թ. հունիսի 29-ից հետո Կաթնառատ: Անկասկած, Ալիշանի «Միսական»-ում հիշատակված Փլմազրայն է: Ռ.Էջանանցու վկայությամբ՝ բնակչության մի մասը հարևան Փուխրուտ (Բեխորուտ) գյուղից է: Մեր օրերում ամառանոց է:

²⁰ Բախշի Հարությունյանն է, ծնված 1893թ., տեղափոխվել է Բաքու, նավթահանքերում աշխատել որպես փականագործ: Բաքվի զանգեզուրցիների շրջանում ունեցել է մեծ ճանաչում:

Չարենցի հետ էր նստել: Հորս տարան Գորիսի բանտ ու որոշ ժամանակ անց հետ բերին: Չգիտեի, որ տարիներ անց հերթն ինձ էր հասնելու:

1949-ին սովորում էի Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում, ապրում էի պրոսպեկտի {այն ժամանակ՝ Ստալինի պողոտա} հանրակացարանում: Հունիսի 13-ի գիշերն էր: Ինձ քնից արթնացրին զինված, ավտոմատովոր երկու ռուս զինվոր: Ձարմացած նայեցի, չէի հասկանում, թե ինչ է կատարվում: Կարծում էի՝ երազի մեջ եմ, իսկ հետո, երբ սթափվեցի, մտածեցի, որ սրանք շփոթել են ինչ-որ բան:

- Собирайте ваши вещи, вы заключены {Հավաքեք Ձեր իրերը, Դուք կալանավորված եք}, - հրամայեցին զինվորները:

- По поводу чего? {Ի՞նչ առիթով}, - այլալված հարցրի ես: Հետո ուզեցի փրկվել, ավելացրի. “Завтра у меня практика” {վաղը ես պրակտիկա ունեմ}:

- Собирайте ваши лахмотья, - {հավաքեք Ձեր լաթերը}, - ավելի խիստ հնչեց հրամանը, և ինձ դուրս նետեցին մահճակալի վրայից: Ես սարսափահար էի: Մայրս մահացած էր, տանը՝ որբեր, հայրս՝ 37-ին բռնադատված, հորեղբայրս՝ բանտում: Հորս միակ մխիթարությունն էի, նա ուրախ էր, որ ես ուսանող եմ, հույսեր էր կապում ինձ հետ: Ինձ հանեցին սենյակից, նստեցրին բեռնատար: Նայեցի հանրակացարանի լուսամուտներին: Ուսանողներն արթնացել, կախվել էին լուսամուտներից, աղջիկներն արտասվում էին, տղաները լուռ էին: Հանրակացարանում նաև դափանցիներ էին ապրում, կարծեմ՝ նրանք չորս հոգի էին:

Հետաքրքիր էր. 13-ի երեկոյան կողմ ես օպերայի մոտ տեսել էի բեռնատարներ ու զինվորականների: Նկատելի էր, որ նրանք մի տեսակ մարտական պատրաստության վիճակում են: Ի՞նչ իմանայի, որ մի քանի ժամից պիտի տհաճ հանդիպում ունենամ նրանց հետ, որ ինձ պիտի հանեին հանրակացարանից ու տանեին ուղիղ «Մասիս» կայարան: Բանից պարզվեց, որ ինձ կայարան բերող զինվորները բավական արագ են գործել: Կայարանի հավաքակայանում ընդամենը մի հոգի էր: Ծանոթացա՝ Հունաստանից Հայաստան ներգաղթած հայ էր:

Ասաց՝ որտեղից ե՞ս:

Պատասխանեցի՝ Ղափանից:

Ասաց. «Գաղափար չունեմ, թե այդ Ղափան կոչվածը որտեղ է»:

Մի երկու ժամից կայարանը լցվեց տասնյակ ավտոներով՝ բեռնավորված մարդկանցով ու իրերով: Մեզ բարձեցին տավարնի {ապրանքատար} վագոններ, ու շարժվեցինք անհայտ ուղղությամբ: Առաջինը, որ հիշում եմ արքայի ճանապարհից, բազմապիսի ու բազմաթիվ վիրավորանքներն են: Առաջին վիրավորանքը այն էր, որ մենք չունեինք զուգարաններ: Ջուր ևս չկար: Հաջորդն այն էր, որ երբ հարցնում էինք, թե մեզ ուր եք տանում, պատասխանում էին՝ молчать {լռել}:

Մի կարևոր բան մոռացա. «Մասիս» կայարանում զինվորների հսկողության տակ սպասում էինք, թե երբ պիտի ճանապարհ ընկնենք: Հանկարծ հայտնվեցին իմ ընկերները՝ երկրաբանական ֆակուլտետի ուսանող Ռաֆիկ Չուխաջյանը, պոլիտեխնիկի Արամն ու Ներսեսը: Նրանք այն ժամանակ քաղաքի «լավ ախպեր» տղերքն էին: Զարմանալի բան եղավ. նրանք ինձ հանեցին զինվորների հսկողությունից, տարան, կանաչների մեջ նստեցին ու առաջարկեցին՝ արի քեզ փախցնենք, տանենք Լենինական: Վախեցա, մերժեցի, մտածում էի, որ դրանից լավ բան դուրս չի գա: Տղաներն ինձ բավական գումար տվին, որը հետո ինձ շատ պետք եկավ: Ինձ համար հագուստ էին բերել, չբավարարվեցին, հանեցին իրենց կուրտկաներն ու ինձ հանձնեցին:

«Իսկ ի՞նչ է կատարվում Ղափանում», - մտածում էի ես: Հասկանալի է, հետո իմացա, որ այստեղ էլ մարդկանց լցնում էին վագոնները:

Մեզ տեղափոխում էին, ինչպես որ կտեղափոխեն անասուններին՝ սոված, փակ վագոններում, անհայտ ուղղությամբ: Մի՞թե մարդկանց հետ այդպես են վարվում Սովետական Միությունում: Հաղթել էինք ֆաշիզմին, հիմա ո՞ւմ դեմ ենք կռվում: Պատերազմ սեփական ժողովրդի՞ դեմ:

Մենք ամաչում էինք, մեզ նսեմացնում էին: Մեր վագոնում գոնե անցք էլ չկար: Հասկանալի է, թե ինչի համար եմ ասում: Կացին գտնվեց, և անցք բացվեց, բայց գիտե՞ք՝ ինչ սոսկալի բան էր դրանից օգտվելը: Մեր վագոնում ծննդաբերություն եղավ: Տարածքը սպիտակեղենով ծածկեցին, տղամարդիկ վագոնի մի մասից մյուս մասն անցան, և կինն ազատվեց: Երեխան ծնվեց վագոնի հենց ընթացքի մեջ: Զգիտեմ՝ չեմ հիշում՝ տղա՞, թե՞ աղջիկ ծնվեց: Լավ չէ, որ չեմ հիշում:

Մի ցավալի բան տեղի ունեցավ, որ վշտացրեց բոլորիս: Մեզ հետ նաև մի ռազմագերի կար: Հրաշալի մարդ էր, երևում էր, որ շատ բան է տեսել: Լուռ էր, տխուր էր, բայց մի օր խոսեց. «Լավ բան չեմ գուշակում: Պատերազմ, հետո գերմանական կոնցլագեր {համակենտրոնացման ճամբար}, հիմա էլ սովետակա՞ն լագեր: Չեմ դիմանում, հոգնել եմ էս կյանքից»: Մի գիշեր մեզ բոլորիս համբուրեց ու կորավ: Իրեն ցա՞ծ էր նետել, թե՞ փախավ, այդպես էլ չիմացանք:

Մեր ուղին տևեց 13 օր ու գիշեր: Ճանապարհին գնացքը մեկ-մեկ կանգ էր առնում, ու մեզ հանում էին վագոններից՝ տալով 5 րոպե ժամանակ: Եվ ի՞նչ էր կատարվում այդ ժամանակ՝ նոր ստորացում. մենք դուրս էինք թռնում վագոններից, վագում՝ ուր պատահեք, մտնում էինք վագոնների տակ: Ո՛չ քար, ո՛չ ծառ, ո՛չ թուփ կար, որ թաքնվեինք միմյանցից: Ի՞նչ անեինք, ի՞նչ ամոթ, ի՞նչ միմյանցից քաշվել, չէինք ամաչում, կողք կողքի գուգարան էինք գնում, աչքներս փակում իրար դեմ: Եթե ուշանում էինք, մեզ վագոն էին քշում: Մի տեղ մեզ քշեցին՝ բաշնյաններից (աշտարակներից) ջուր մղելով:

13-րդ օրը հասանք «Ալտայսկայա» կայարան: Այստեղ իմացա, որ մերոնց վերցրել են Ղափանից և գալիս են մեզանից հետո: Ալտայսկում մեզ բաժանեցին: 87 ուսանող, բոլորս

աղջիկ ու տղա, ընկանք Պետրովսկի լեսպրոմխոզ {անտառտնտեսություն}՝ Օր և Ենիսեյ գետերի միջև: Երբ տանում էին տայգայով, մոծակները հարձակվեցին մեզ վրա: Եթե մի 10 հատ մոծակ մեկին կծեր, կարող էր մեռնել: Պետրովսկի լեսպրոմխոզում, որտեղ ռուսներ էին բնակվում, մնացինք շուրջ 6 ամիս: Մեզ հետ նաև հայրենադարձներ էին՝ Հունաստանի Սալոնիկ քաղաքից Գրիգորն ու նրա եղբայրը: Գրիգորն աքսորվալարում ինձ հանդիպած լավագույն մարդկանցից էր: Նա փող ուներ, օգնում էր ընկերներին, հաց չէր ուտում առանց մեզ: Նրանց մի եղբայրը Սալոնիկում, իրենց ասելով, պարֆումերիայի գործարան ուներ: Ցավոք, ազգանունները չեմ հիշում: Կացին տվին մեր ձեռքը, որ հատակ սարքեինք: Փոքրն այդ ո՛նց էր սիրում մեծին: Երբ աշխատանքի ժամանակ կտրվեց Գրիգորի բութ մատը, սուգ եղավ փոքրի համար: Միմյանց գրկել, լաց էին լինում: Չդիմացանք ու մենք էլ լաց եղանք: Եվ կյանքում առաջին անգամ այդ պահին իմ մեջ արթնացավ հավատը ճակատագրի հանդեպ:

Լեսպրոմխոզում ամենասարսափելին մոծակն էր: Մոծակն այնքան շատ էր, որ ստիպված նամորդնիկ {դնչակալ} էինք հագնում: Այստեղ ինձ բրիգադիր նշանակեցին, չնայած ո՛չ փայտ կտրել գիտեի, ո՛չ ծառ տապալել: Այնուհանդերձ նշանակեցին: Բայց գործում էր закон тайги-ն {տայգայի օրենքը}, և ինչ-որ հայ ուսանողի բրիգադիր լինելը դուր չեկավ տեղական ռուսներից մեկին, որը հայտարարեց. “Кто ты такой, голодный студент. Ты лес не знаешь, не в чем не разбираешься” {Ո՞վ ես դու, սոված ուսանող: Դու անտառը չգիտես, ոչինչ չես հասկանում}: Նրա և ռուս տղաների միջև էլ կոնֆլիկտ կար: Զզվում էինք դրա ձեռքից, շարունակ խանգարում էր, շանտաժներ անում: Նա վտանգավոր էր: Հանգիստ չկար: Մի օր լսեցի, որ որոշել են դրան շարքից հանել: Էդպես էլ եղավ. ձմռան մի օր եկան ու ինձ ասացին. “Георгий, все. Мы его убили и похоронили. Сейчас в лагере будет царствовать мир” {Գեորգի՛, վե՛րջ: Մենք նրան սպանեցինք ու թաղեցինք, հիմա ճամբարում կթագավորի խաղաղությունը}:

Լավն էին ռուսները, վերին աստիճանի լավը: Օգնող էին, ծանր, նեղ դրության մեջ հայտնվածին ձեռք էին մեկնում: Սահմանային, ծայրահեղ իրավիճակում հայտնվելիս իրենք իրենց չէին կորցնում: Նրանք հասարակ մարդիկ էին: Ճամբարում մեր գիշերելու տեղը բարաքներն էին: Լավ տղաներ կային: Բարաքում իմ կողքին քնում էր համալսարանի պատմության ֆակուլտետի գերագանցիկ ուսանող Գրիշա Կիրակոսյանը ու էլի դասախոսներ, ուսանողներ: Հավաքվում էինք, խարույկ վառում: Ու մի օր խարույկի շուրջը մենք աննման մի արարողություն կատարեցինք: Մեծ, չտեսնված մեծ խարույկ վառեցինք ու... **կրակի մեջ նետեցինք մեր կոմստոլի տոմսերը:**

Նամակագրական կապ ունեինք Երևանի հետ: Գրիշան նամակ էր գրում այս ու այն կողմ: Նամակ գրեց նաև Ամենայն հայոց կաթողիկոս Չորեքյանին, ստացանք նրա պատասխանը: Արտասահմանում էլ գիտեին, որ բուհերի ուսանողները աքսորված են հայրենիքից և տայգայում են: Աքսորվածների մեջ էր նաև բժիշկ, պրոֆեսոր Մարտիրոսյանը: Պրոֆեսորն ընտանիքի հետ էր: Նա օգնում էր մեզ, կերակրում, իր տանը ճաշ էր պատրաստում ու մեզ կանչում ճաշկերույթի: Ճամբարում գոյատևելու շատ խնդիրներ էինք լուծում մեր հնարամտությամբ: Բացատներում կարտոֆիլ էր աճեցվում, իսկ մենք՝ սոված: Մտադրվեցինք գողանալ, բայց օրը ցերեկով կրոնվեինք, գիշերն էլ

անհնար էր խավարի պատճառով: Հնարը գտանք: Քարեր շարեցինք դեպի բացատներ, նրանց հետքերով գիշերը հասնում էինք այստեղ, կարտոֆիլ քանդում, պարկերի մեջ բերում էինք ճամբար և սնվում դրանով: Ղափանցի Գառնիկ կար՝ Առաջաձորից²¹, վախ չունեիր, բոլորից շատ նա էր գիշերով կարտոֆիլ բերում ու բաժանում հայերին: Անգամ միայնակ էր այդ գործն անում, խավարի մեջ գնում հասնում էր ամենահեռավոր բացատները: Հետո մտածեցինք կաթ խմելու մասին, բայց դրա համար պիտի կով կթեինք: Գիշերը հնարավոր չէր մտնել ֆերմաները, ցերեկը դույլերը կմատնեին մեզ, կբռնվեինք: Հայտնագործությունն արեցինք. գտանք խրոմե ժիլետներ, հագնում էինք, մոտենում կովին, կթում ժիլետների մեջ և բերում ճամբար: Կաթը բաժանում էինք նախ՝ հիվանդներին, հետո նոր միայն՝ սովածներին:

Երիտասարդ էինք, եռանդուն, աքսորում անգամ՝ լավատես, հենվում էինք միմյաց վրա, օգնում միմյանց, հավաքվում էինք, քննարկում, վիճում: Եվ անկեղծ եմ ասում, այստեղ՝ հենց Սիբիրյան ճամբարում, մենք սկսեցինք մտածել Խորհրդային Միության փլուզման մասին: Համոզված էինք, որ երկիրն էսպես չի կարող երկար գոյատևել:

Ռուսները շարունակ ասում էին մեզ. “Какие вы добрые люди, как вас переселили, мы стали богатые” {Ինչպիսի բարի մարդիկ եք դուք, հենց ձեզ վերաբնակեցրին, մենք հարստացանք}: Այսպես ասելու պատճառն էր, որ մեր գալու տարին բարձր բերք ստացվեց: Վեց ամիս անց մեզ բաժանեցին իրարից, բերեցին Նովոսիբիրսկ, այստեղ ցրեցին տարբեր վայրերում: Միացնում էին մեր ընտանիքներին:

Ինձ ուղարկեցին Ալթայ՝ “Плановое хозяйство” {Պլանային տնտեսություն} կոլխոզը: Շուտով այն միավորվեց մի քանի տնտեսությունների հետ և կոչվեց “Путь крестьянина” {Գյուղացու ուղի}:

Մեզ հետ աքսորում էր նաև մի ադրբեջանցի՝ Ղովշուտ գյուղից²²:

Չէ, իսկապես՝ народ {մեծ ժողովուրդ}: Մենք գուցեև աքսորի մեջ էլ չկարողանայինք գոյատևել, եթե չլիներ ռուսների օգնությունը: Մի օր ինձ բերեցին ուղիղ կազեֆե: Վեց ամսից ավելի սափրված չէի, և դա աչքի էր զարնում: Տանում բերում էին, էնքան տարան բերեցին, որ ես տեսանելի դարձա դպրոցից, որը հենց կազեֆեի շենքի մոտ էր: Այստեղ ծանոթացա շատերի հետ: Կազեֆեի պետ Գրուշկովն ասաց՝ դուք աքսորականներ եք: Ես էլ ավելացրի. “Я армянин, нас переселили” {Ես հայ եմ, մեզ վերաբնակեցրել են}:

Հայրս «Плановое хозяйство»-ում էր: Հանդիպեցինք: Հայրս... նախկին զինվորը՝ Բաքվի 1918 թվականի պաշտպանության մարտիկը՝ Զանգեզուրի գոյամարտի զինվորը, մի քանի ամսում ծերացել էր: Արցունքն աչքերին, հոգնած ու տխուր էր: Կարոտել էի մերոնց, մանավանդ քույրիկիս²³: Հորիցս մանրամասնություններ իմացա հունիսի 14-ի օրվա

²¹ Առաջաձորից Գառնիկ անունով երկու աքսորական կար՝ Շահնազարյան և Ավետիսյան: Խոսքը 1933-ին ծնված Ավետիսյանի մասին է:

²² Ղովշուտից աքսորվել է Ադանայում ծնված Քյազումով Ալի Ահմեդ Օղլուի՝ 7 շնչից բաղկացած ընտանիքը: Աքսորականները հիշում են միայն հայերի հետ սերտ կապեր ունեցած Ալիի որդուն՝ գուռնաչի Աբասին:

²³ Ժաամենան է՝ ծնված 1942թ.:

մասին: Ռուս զինվորների հետ մեր տուն էր եկել շրջկոմից կցված Ղոնյան Անդրանիկը²⁴: Երբ զինվորները հրամայել էին հորս հավաքել անհրաժեշտ իրերը, բեռնել մեքենան ու շարժվել կայարան, հայրս ասել էր. “Лучше спалитъ дом” {ավելի լավ է՝ տունը հրդեհեք}:

Դիմադրել էր, հրաժարվել բեռնատար բարձրանալ: Այդ ժամանակ զինվորը բռնել էր չորս տարեկան քույրիկիս ու շարտել բեռնատարի մեջ: Իրերը ջարդել էին, իսկ կովերը, ոչխարը, սագերն ու հավերը թողել անտեր: Շրջկոմից կցվածը ոչինչ չէր կարող անել, միայն հորդորել էր անհրաժեշտ պարագաներ վերցնել ու օգնել էր իրերը բարձել մեքենա:

Իմ նոր բնակավայրում դպրոցի տնօրենը Կլաուդիա Վասիլևնան էր, ուսմասվարը՝ Մարիա Գարդինյան: Երկուսն էլ հոգատար էին հայերի, առավել ևս հայ երեխաների հանդեպ: Նրանք շատ անգամ օգնեցին քույրիկիս, երբ նա սկսեց դպրոց հաճախել: Աքսորական իմ կյանքի 2-րդ փուլը սկսվեց: Նշանակվեցի ձիապան: Ծանր գործ բաժին ընկավ ինձ: Ես պիտի 36 ձիու համար 98 մ խորությամբ ջրհորից ջուր հանեի, խմեցնեի, կերակրեի ու մաքրեի գոմը: Իմ օգնականն իբր Դեդ Եգորն էր, մի ծույլ ու անբան մարդ, որը սիրում էր խմել ու քնել: Հարբեցող ռուսի կերպար: Չէր օգնում, ասում էր՝ պարտավոր ես աշխատել: Ծանր, հյուծիչ աշխատանք էր: Ես գործադուլ արեցի: Հենց առաջին օրը, երբ հրաժարվեցի աշխատանքի գնալ, ինձ նստեցրին գործալքության համար: Բանտում նստեցի 15 օր: Սովորելու, շատ բան իմանալու օրեր էին: Ինձ բախտ վիճակվեց նստել մի մարդու հետ, որը հայտնի դեմք էր եղել անցյալում. բանտում նստել էր Էսեռուհի Կապլանի հետ: Ցավոք, կրկին անունը մոռացել եմ: Գուցե կհիշե՞մ: Տարիները, իմ հիվանդությունը, վերջին Ղարաբաղյան պատերազմը, տանս ավերն ու հրկիզվելը ռմբակոծությունից շատ բան են ջնջել իմ հիշողությունից:

Ինչ որ է՝ նա ձի էր գողացել, բայց դատարանում հրաժարվել էր: Ասել էր, որ ինքը բոլորովին էլ գող չէ, այլ դիպվածի գոհ է: Իբր անցնելիս է եղել պատկած ձիու վրայով, այդ պահին ձին թռել է տեղից, ինքն էլ հայտնվել է ձիու վրա: Հետո չի կարողացել իջնել, քանի որ ձին պոկվել է տեղից ու արագ սլացել: Հրաշալի մարդ էր իմ ձիագող ընկերը:

Մի գիշեր բանտ բերեցին մի կնոջ՝ կրծքի երեխայի հետ միասին: Երկուսն էլ հիվանդ ու սոված: Կինը ոչխար էր գողացել: Բանտային պայմաններում նրանք պաշտպանության կարիք ունեին: Երեխան սովից կարող էր մեռնել: Եվ ձիագողը, որի հսկողության տակ էր ամբողջ կամերան {բանտախուցը}, հանուն երեխայի հայտարարեց. «Ես ամուսնանում եմ երեխայի մոր հետ»:

Հաջորդ օրվանից սկսած՝ չգիտես՝ որտեղից կամերա էին բերվում կաթ ու այլ անհրաժեշտ մթերք: Երեխան ու մայրն իրենց լավ էին զգում: Կարգին տղամարդ էր, հատուկ հարգանք ուներ ուսանողների և ուսուցիչների հանդեպ: Ինձ՝ որպես ուսանողի արգելել էր մեզի

²⁴ Կապլանի Վաչագան գյուղից, 1934-1937թթ. ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար, 1942-1945թթ. ՀԿԿ Ղափանի շրջկոմի քարտուղար: Եղել է <<Սովետական Հայաստան>> թերթի Զանգեզուրի սեփական թղթակիցը, վարել մի շարք պատասխանատու պոստեր: Մահացել է 1977թ.:

համար նախատեսված չուգունե ամանները դուրս տանել: Տասնհինգ օրից ազատվեցի:

Ինձ կրկին օգնության հասան Մարիան ու Կլաուդիան: Կլաուդիան, իմ գեղեցկուհի, իմ սիրելի Կլաուդիան... Սովորել էր Օրեխովո Զուեվոյում, պատմաբան էր, լավն էր, քնքուշ ու անկեղծ էր: Ես սիրահարված էի: Բայց այստեղ «օգնության» հասավ հայրս ու պահանջեց հեռու մնալ ռուս աղջիկներից: Նա շարունակ քարոզ էր կարդում. «Կինդ պիտի հայուհի լինի, պիտի ուսումը շարունակես, պիտի ռուս աղջիկներին մոռանաս»:



Աքսորավայրում երկու հսկողության տակ էի՝ տեղական կազմերի ու հորս: Բայց հայրս ավելի խիստ էր հսկում, քան սովետական կազմերն: Նա հույսով էր, որ ուր որ է՝ պիտի մեզ ազատեն աքսորից: Իսկ այդ ընթացքում ես գաղտնի հանդիպում էի Կլաուդիային: Նա ինձ պարել էլ սովորեցնում: Նա և ընկերուհին իմ թիկունքն էին, հասարակ էին ու մեծահոգի: Մենք չենք կարող եղպիսին լինել: Հաճախ, երբ Կլաուդիայի հետ առանձնանում էի ու զրուցում, նա, արցունքն աչքերին, ինձ ասում էր, որ սիրում է ինձ, որ ինքը պատմաբան է և լավ գիտի հայերի պատմությունը: Նա նշում էր, որ հայերի մասին գրել, հայ պոետներին թարգմանել են Բլոկը, Բրյուսովը... գիտե՞ր Գրիբոյեդովի հետ տեղի ունեցածը: Վեհ ու ազնիվ աղջիկ էր Կլաուդիան: Ես 21 տարեկան էի, նա՝ իմ հասակակիցը: Իսկ հայրս շարունակում էր ճնշում գործադրել ինձ վրա: Եվ հետո ես էլ մտածում էի Հայաստան վերադառնալու մասին: Բոլորն էին մտածում վերադառնալու մասին:

Այսպես ուրեմն, ես դուրս եկա բանտից, նշանակվեցի նույն աշխատանքին, որն ինձ համար անընդունելի էր: Կրկին Եգորի հետ պիտի աշխատեի: Եգորն անուղղելի էր, ես ընդհարվեցի նրա հետ: Մեր ընդհարման մասին իմացան կոլխոզի ղեկավարները և ինձ ուղարկեցին տրակտորիստների կուրսերի: Քննությունս հանձնեցի գերազանց, եկա, վերանորոգեցի ԿՏ3 տրակտորն ու սկսեցի վար անել: Իմ երջանիկ օրերն էին. Կլաուդիան միացել էր ինձ, ու միասին վար էինք անում: Դե, արի ու մի ասա՝ աքսոր, բայց երջանիկ, անչափ երջանիկ օրեր: Ես ջահել էի, առողջ, ուժեղ, հույսերով լեցուն, մտածում էի, որ կյանքն առջևում է:

Այստեղ էլ գոհ էին հայերից, շարունակ ասում էին, որ հայերը բարի են, որ նրանց այս կողմերը գալուց հետո բարձր բերք է ստացվում: Մեր տրակտորիստների բրիգադի ղեկավարը գերմանացի Ռոս Շմիդտ Անդրեյ Անդրենիչն էր: Նման մեխանիկ ո՛չ եղել է, ո՛չ

էլ կլինի: Նա 100 մետրի վրա տրակտորի ձայնից որոշում էր, որ տրակտորն անսարք է, և նրա այս կամ այն մասը նորմալ չի գործում: Ռոս Շմիդտը ծանոթացավ ինձ հետ և նշանակեց тракторни отряди –ի учетчик {տրակտորային ջոկի հաշվառող}: Մինչ իմ նշանակվելը վառելիքի գերաժախս էր լինում: Ես եկա ու մեծ խնայողություն արեցի: Ռուսական հողի պայմաններում բոլորովին կարիք չկար бороновании {տափանոթ} կապելու: Հողը փխրուն էր, վարելիս փլուզվում էր: Իսկ իմ խնայած վառելիքը հաճախ բաժանում էի նրանց, ովքեր դրա կարիքը զգում էին: Հիասքանչ էր ցորենի բերքահավաքը: Գիշերում էինք դաշտում, օրերով չէինք հեռանում, 150 մեքենա էր աշխատում, դրանցով ցորենը տեղափոխում էինք Սլավգորոդի էկստոր:

Երջանիկ, երջանիկ օրեր էին:

«Планхоз»-ը դարձավ առաջին միլիոնատեր տնտեսությունը: Մանկապարտեզ բացեցին, երեխաներին սնունդ էր տրվում: Բանվորներին ևս անվճար ճաշ էր տրվում: Տնտեսության նախագահը Բասակով Դմիտրին էր: Նա մի աղջիկ ուներ, սովորում էր Մոսկվայում, պատմության ֆակուլտետի ուսանողուհի էր, հաճախ ասում էր ինձ. «Գեորգի՛, արի՛, աղջկա ամուսնացնեմ քեզ հետ, հետո էլ կդառնաս կոլխոզի նախագահ»:

«Առաջ էի գնում», շուտով ինձ նշանակեցին ֆերմայի վարիչ: Բայց շաբաթն ուրբաթից շուտ եկավ: Իմ նշանակվելուն պես ֆերմայում 1500 ոչխար կոտորվեց: Ոչ ոք մեղավոր չէր: Ուրիշ ֆերմաներից հիվանդ անասուններ էին բերել, վարակել ֆերման: Հիմա ինձ դատում են: Դատավորը տատարկա էր {թաթարուհի}, շատ խելացի կին: Ինձ չմեղադրեց, ասաց՝ այս ու՛մ պիտի դատենք և ինչու՞ պիտի դատենք: Այս տղան մեղք չունի: Ինձ արդարացրին: Ասեմ, որ էդ ժամանակ տնտեսության գոտեխնիկը Շիկահոդ գյուղից Գրիգոր Ստեփանյանն էր²⁵:

Ֆերմայի վարիչ էի: Հատուկ բաժնի պես Բիկովը սահնակով մարդ ուղարկեց, որպեսզի ես գնամ շրջկենտրոն: Այստեղ էր բերվել գերմանական կոնցլագերում նստած գործիցի Շահունց Սամսոնը, որ հազիվ էր քայլում, և քննության ենթարկվեց: Ես պիտի թարգմանեի նրան: Բայց արի ու տես, որ Սամսոնը կտրականապես հրաժարվեց, որ ինքը եղել է կոնցլագերում: Գնդապետը կատաղեց. «Գեորգի՛, էս մարդը չոբան էր, չոբան էլ մնացել է: Մենք Անդրանիկ անունով մեկի անցյալն ենք պարզում: Մա կոնցլագերում վերևի նարում էր պառկում, իսկ Անդրանիկը՝ ներքևի: Անդրանիկը հիմա ռազմական ակադեմիայում է սովորում: Հետո ինձ ցույց տվեց նարերի լուսանկարները, որ ինձ զարմանք պատճառեց, թե ինչպես են լուսանկարել: Դուրս էր գալիս, որ մի 5-6 հոգու միջոցով ամեն ինչ իմացել են: Գնդապետը կատաղեց, Շահունցին ասաց. «Քո նարը Անդրանիկի նարից վեր էր»։ Բայց սա չէր խոսում: Ստիպված ազատեցին: Մի քանի օրից հանդիպեցի Շահունցին, ասացի. «Արի, ճշմարտությունն ասա, միևնույն է, իրենք քեզնից լավ գիտեն: Քեզ տանջելու են»:

Մի օր Բիկովն ինձ տեսավ ու ասաց, որ «Չոբան»-ը էլ պետք չէ, որ այս պատմության վրա 150 մարդ են գտել:

²⁵ Ռազմագերի, արքայական, գրքում կնոջ՝ Սոնյա Վարդապարյանի հուշերն են:

Հիմա՝ Շահունց Սամսոնի մասին: Զնամենսկի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Կաունովը լսել էր, որ սա 5000 ոչխարը հատ-հատ հաշվում է: Հետաքրքրվել էր, եկել, դիտում էր տեսարանը: Շահունցը կանչում էր ոչխարին, մահակը պահում, իսկ ոչխարը թռչում էր մահակի վրայով: Քարտուղարը հիացել էր: Մի անգամ Կաունովը եկել էր դաշտ, տեսել էր՝ քնած եմ, իսկ ես պիտի մեքենան ցորեն բարձեի: Ինքն էր բարձել մեքենան, ասել էր՝ տղային չարթնացնեք, թող քնի:

Էսպիսինն էր կյանքը:

Շատերին սիրով եմ հիշում: Հայկ Իվանիչին այստեղ բոլորն էին ճանաչում: Նա Ղափանի կայարանում «Կռունկ» էր երգել, լացացրել բոլորին, հարգված մարդ էր, կոլխոզում՝ հաշվապահ: Գորիսցի Արարատը հրաշալի անձնավորություն էր, Գորիսից իր հետ Ալթայ էր հասցրել թառը, հիանալի նվագում էր, որտեղ լինեք, քեֆ էր կազմակերպում: Հենց որ սա երևում էր, ռուսներն ասում էին՝ армяне пируют {Հայերը խնջուքի մեջ են}: Հաճախ նաև մարզական միջոցառումներ էին անցկացվում: Հայերի վոլեյբոլի թիմը հաղթեց շրջանի թիմին: Սիրով եմ հիշում Գուրգեն Իսրայելյանին²⁶:

Հայերն աչքի էին ընկնում նաև իրենց հնարամտությամբ: Գողության հնարամիտ վարպետ էին: Օրինա՞կ եք ուզում, կասեմ, թե ինչպես էին բուրդ գողանում: Մերոնք կամ քշում, կամ այլազգի հովիվներին համոզում էին ոչխարը քշել մացառուտ, փշոտ, թփերով հարուստ տարածքներով, հաճախ մի քանի անգամ տանում բերում էին: Հասկանալի է, ոչխարը քսվում էր մացառներին, բուրդն առատորեն պոկվում և մնում էր դրանց վրա: Մնում էր խնամքով հավաքել: Գուցե հենց դա էր պատճառը, որ մերոնք բրդի հարուստ պաշար ունեցան, և ոմանք էլ նույնիսկ իրենց հետ հայրենիք բերեցին: Էլի օրինակներ կան, բայց կարիք չկա խոսել այդ մասին:

Չեմ հիշում, թե որ թվականին Բառնաուլում եղավ գյուղատնտեսության առաջավորների խորհրդակցություն, ելույթ ունեցավ մարզկոմի քարտուղար, հետագայում կարծեմ գյուղատնտեսության մինիստր Կոստանդին Պիսին. «Дорогие товарищи. У нас пересиленцы из Армении. Они личный раз доказали, что способные, трудолюбивые, доверчивые люди. Доверяйте все руководящие посты» {Թանկագին ընկերներ, մեզ մոտ վերաբնակեցվածներ են Հայաստանից: Նրանք ավելորդ անգամ ապացուցեցին, որ հմուտ, աշխատասեր և վստահելի մարդիկ են: Վստահեցե՛ք բոլոր ղեկավար պոստերը}: Ես էլ մասնակցում էի այդ խորհրդակցությանը, ինքս եմ լսել այս խոսքերը:

Իմ ուրախ օրերից ամենաուրախը կա և հիմա էլ մնում է 1953-ի մարտի 5-ը: Ստալինը մեռավ: Ասեմ, որ, անկախ ազգությունից, բոլորը ուրախ էին, մեծ մասը չէր թաքցնում զգացմունքները, այնպես որ լաց լինող չեմ տեսել: Մարդիկ մեծ հույսեր էին կապում այս չարագործի մահվան հետ: Սկսեցին դիմում դիմումի հետևից գրել: Երբ հայտնի դարձավ, որ հայերը վերադառնալու են Հայրենիք, կոլտնտեսությունում տիրեցին: Նրանք չէին ուզում մեզ կորցնել: Բասակովն ասաց. «Очень жаль. Что вам нужна, куплю, ковры, коровы,

²⁶ Կապանի Բաղաբուրջ գյուղից, արտրվել էր մենակ, կինը հրաժարվել էր միանալ՝ պատճառ բերելով. «Ոչ էլ ամուսնացել եմ, ԶԱԳՍ չեմ անցել»: Կայարանում կնոջն ազատել էին:

зерно... Зачем вам Капан, зачем вам Армения» {Շատ ցավալի է: Ինչ որ ձեզ պետք է, կգնեմ՝ գորգեր, կովեր, ցորեն: Ձեր ինչի՞ն է պետք Կապանը, ձեր ինչի՞ն է պետք Հայաստանը}:

Բայց եղածը, ինչ ունեինք՝ կարտոֆիլ, ցորեն, վաճառեցինք և Մոսկվայի ու Բաքվի վրայով հասանք Ղափան: Բաքվում հայրս ժամանակ գտավ ու ինձ տարավ Տելեֆոննայա փողոց և ցույց տվեց այն շենքը, որի 2-րդ հարկում ինքն ապրել էր այն տարիներին: Երևան եկա ու դարձա ուսանող, շարունակեցի ուսումնա: Դրանով չպրծա: Դեռ երկար ժամանակ, իհարկե, ոչ թե համալսարանում, այլ Ղափանում չմոռացան ինձ պիտակավորել՝ «մաուզերիստի տղա», «դաշնակցական» «աքսորական», «անհարազատ», ու էլի ինչ ասես: Երբ փորձեցի կուսակցության մեջ ընդունվել, այդ պիտակներն իմ երեսովը տվին:

Կարծես թե իմ պատմությունները գունավոր դուրս եկան: Բայց այնքա՛ն ցավ կա իմ հոգում, այնքա՛ն վիշտ ու տառապանք իմ հիշողություններում, որ չեմ ուզում խոսել դրանց մասին: Չեմ կարող մոռանալ. Բառնաուլից վերադառնալիս ոտքերս ցրտահարվեցին, մատներս սևացան: Հայրս գրկեց ոտքերս, դեմ տվեց կրծքին: Ես ցավից գալարվում էի, չդիմացա, հորս հանդիմանեցի. «Մա՞ էր քո արածը: Մենք ի՞նչ ենք անում Սիբիրում: Այդ դու ես մեղավոր, որ հիմա մենք այստեղ ենք»:

- Էդ ի՞նչ ասիր, հոգիս հանեցիր: Ես ի՞նչ անեմ էս անօրեն երկրում: Ասա՛, ի՞նչ անեմ... Մաուզերը ճակատիս են դեմ տվել, աչքերս չեմ թարթել... հիմա դու ինձ լացացրիր:

Փղձկաց հայրս: Նա լաց էր լինում:

Ինչու՞ ասացի:

Հեղինակ՝ Գրիշա Սմբատյան, Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն